



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1977

U.3

412

2013

eyash

1-4 6.2.
412

ՀՀԱՐԱՐ
10

ՀՐԱՏ. Թ. ԷՐԵԿ. ՀԱՅ. ԳՐԱ. ՀՐԱՏԱՐԵԿՈՒԹԵՎՆ

№ 37

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

ՄԻՋԱՋԱՄՑԻ

ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՒԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԽ ՅԱՎԱՆՆԻՍԵԱՆ

1960

ՆՈՐ - ԶՈՒՐԱ

Թ. Ի Գ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարամձե:

1891

(Օ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ՎԵՐԱԿՐՈՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ

ԵՎ Ա

ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԶԵՂՋՄԱՐՑՄԱՆ ՀԱՅ

Հօնք. պեղ. Տիֆլիս. 4-րդ Խուճ, 1891 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ



412-283
Դ. 8, 412.

Տիպոգրաֆія М. Шарадзе. Никол. ул. № 12.

Հայ հասարակութեանը յայտնի է հայ ազգի շնորհալի եւ միակ երգիծաբան Պարոննեանի ողբալի մահը, որ տեղի ունեցաւ վերջերումն Կոստանդնուպոլսում։ Նրա տաղանդը, որ մի եւրոպական հասարակութեան մէջ կարողէր երջանկութեան հիմք դառնալ մի հեղինակի համար, չազատեց նրան եւ յետին կարօտութիւնից, որի մէջ նա մեռաւ, դեռ այնպիսի հասակում, երբ մարդ ընդունակէ երկար տարիներ գործելու։

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը բարձր գնահատելով Պարոննեանի տաղանդը, վերին աստիճանի կրթիչ համարելով նրա աշխատութիւնները մեր հասարակութեան համար, վճռեց մի քանի հատորներով տպագրել այդ աշխատութիւնները, միեւնոյն ժամանակ ցանկանալով այդպիսով յարգել նրա անմնուանալի յիշատակը։ Հետեւեալ հատորում կտրուին կենաագրական տեղեկութիւններ հանգուցեալ հեղինակի մասին եւ նրա լուսանկարը։



Հազար ութը հարիւր եօթանասուն . . .
չեմ լիշեր քանիին, սեպտեմբերի երեսունը մէ-
կին—ներեցէք, երեսունին պիտի ըսէի, վասն
զի սեպտեմբերն երեսուն օր միայն ունի—եր-
կար եւ ընդարձակ թիկնոցի մը մէջ փաթտը-
գած միջահասակ և գիրուկ մարդ մը՝ որ Տրա-
պիկոնի շոգենաւէն նոր ելած էր, Ղալաթիոյ
նաւամատոյցին վրայ կայնած՝ նաւակէ մը իւր
ոնտուկները հանել կաշխատէր:

— Կը տեսնէք, որչափ պարզութեամբ
սկսայ: Պատմութիւնս հետաքրքրական ընելու
ջանքով և անկից քանի մը հարիւր օրինակ
տւելի ծախելու համար չըսի թէ նոյն օրն
սաստիկ հով մը կար, թէ տեղատարափ անձ-
րե կուգար, թէ խուռն բազմութիւն մը հե-

տաքրքրութեամբ գէպ 'ի Ղալաթիու հրապարակը կը վագէր, թէ ոստիկանութիւնն աղջիկ մը ձերբակալած էր և լն. խօսքեր, որովք վիպասաններն կակսին միշտ իրենց վէպերը: Ես ալ կրնայի ըսել ալս ամենը, բայց չըսի, որովհետեւ նոյն օրն ոչ հով կար, ոչ անձրեւ, ոչ խուռն բազմութիւն և ոչ ալ ձերբակալված աղջիկ մը:

Ա'րդ, առանց կասկածելու հաւատացէք պատմութեանս որ ժամանակակից գէպէք մ'է:

Այս ճանբորդն օժտված էր զոյտ մը խոշոր և սե աչերով, զոյտ մը հաստ, սե և երկար յօնքերով, զոյտ մը մեծ ականջներով և զոյտ մը քիթեր . . . չէ, չէ, մէկ քիթով թէպէտ և բայց զոյտ մը քիթերու տեղ կրնար ծառալել. անոր մեծութիւնը սխալեցուց զիս: Ունէր այնպիսի նախուածք մը՝ որուն եթէ Պ. Յ. Վարդովեան Հանդիպէր իւր աչերով կը հարցունէր ալդ մարդուն, Շնչ ամսական կուզես թատրոնիս մէջ ապուշի գեր կատարելու համար:

Սնտուկներն և անկողինն որ քուրջի մը մէջ ներփակված էր, նաւակէն հանելուն պէս ճանբորդն քաշեց քսակն և նաւափարին իրաւունքը վճարելով՝ բեռնակիր մը կանչեց: Հինգ բեռնակիրներ ներկալացան իրեն: Տարակուս

չկալ սր եթէ հինգ կանչեց՝ քսանկեհինգ պիտի ունենար իւր առջեւ մայրաքաղաքիս սոյ վորութեանը համեմատ:

— Ո՞ր կողմ պիտի երթաք, աղար հահար ցուց բեռնակիրներէն ծին մէկ ոտնը սնտուկը ներէն միոյն վրայ կոխելով:

— Բէրա, Ծաղկի փողոց թիւ 2, պիտի երթամ պատասխանեց խողոր մարդը:

Նատ աղէկ, հասկցալ, Բէրա, Ծաղկի փողոց . . . պատուական փողոց մ'է ըսաւ հարցումն ընող բեռնակիրն և սնտուկ մը շալկեր լով սկսաւ երթալ:

— Ծաղկի փողոցն ես ալ գիտեմ, ըսաւ երկրորդ բեռնակիրն և սնտուկին մէկն ալ ինք առնելուն պէս Բէրայի ճանբան բոնեց:

— Ես ամեն օր կերթամ Ծաղկի փողոցն ըսաւ երբորդն և մարդուն անկողինը գետնէն վեցցնելն կոնակին վրայ տոնելն ու վագելն մէկ ըրաւ:

Այս գործողութիւններն այնքան արագութեամբ կատարվեցան որ մարդը շուարելով սկսաւ չորս կողմը նախի տեսնելու համար բեռնակիրներն որ բազմութեան մէջ անլաւտ եղած էին:

— Ի՞նչ խալտառակութիւն է աս, պօռաց վերջապէս ոտները գետինը զարնելով, ուր տա-

ըին անկողինս և սնտուկներս, ատոնք թնչ իրաւունք ունին իմ անկողնոյս և սնտուկներուս խառնվելու, թնչ աներես մարդեն եղեր այս տեղաց մարդերը, ինչ որ կը տեսնեն կառնեն կը տանին:

— Ծաղկի փողոցը մենք ալ գիտենք, աղա, մեղի ալ բան մը տուր որ տանինք, ըսին միւս երկու բեռնակիրները:

— Ծաղկի փողոցն ալ գետնին տակն անցնի դուք ալ, պատասխանեց մարդն որուն այտերն նեղութենէ կարմրիլ սկսած էին:

Երկու բեռնակիրները խնդալով հեռացան. և ճանրորդն ալ իւր սնտուկներուն ետեւէն երթալ կը պատրաստվէր երբ բարձրահասակ, թխադէմ, փոքր աչերով մարդ մը՝ ուսերը տնկած, ձեռները շիերով և բռնազբօսեալ ժայիտով մը մօտեցաւ անոր և քաղաքավարական ձեռով մը ձեռները բռնելով հարցուց.

— Դուք էք Արիսողոմ աղա, երբ եկաք, ո՞ր շոգենաւով եկաք, թնչալէս էք, ձեր եղբարն թնչալէս է, ազգային գործերն ինչալէս են Տրապզոն, Հացին գինը քանի է հոն, անձրև եկաւ այս օրերս ձեր քաղաքը . . . վայ, Արիսողոմ աղա, վայ . . .

— Ես եմ Արիսողոմ աղա, Հիմալ եկալ,

տաճկի շոգենաւով եկալ, շատ աղէկ եմ, եղբարս ալ աղէկ է, ազգային գործերն ալ աղէկ են Տրապզոն, Հացին գինը մէկ դահեկանէ, անձրև չեկաւ այս օրերս մեր քաղաքը, պատասխանեց փուլթով թիկնոցաքնակն առանց ճանաչելու այս անձն:

— Ներեցէք, թողութիւն ըրէք որ չկրցի մինչև շոգենաւ գալ զձեզ դիմաւորելու Համար; Ինձի գրված էր Տրապզոնէն որ այս շաբթու անպատճառ հոս պիտի գաք . . .

— Ես ատանկ բաներու չեմ նալիր; — Արդարեւ մալրաքաղաքս ինքինքը բախտաւոր համարելու է ձեզի պէս պատուական ազգային մը, շնորհալի երիտասարդ մը, ողջամիտ մէկը . . .

— Սնտուկներս . . .

— Ազնիւ սիրտ մը, վեհանձն հոգի մը . . .

— Բեռնա . . .

— Հայրենասէր անձ մը . . .

— Կիրները . . .

— Ազգասէր, ուսեալ, կըթեալ . . .

— Սնտուկ . . .

— Դաստիարակեալ . . .

— Ներս առին տարին . . .

— Ազնուասիրտ, ազնուախոհ, ազնուաղէմ մէկը իւր մէջ ունենալուն համար:

— Անտուկներուս մէջ ատանկ բաներ
չկան, պատասխանեց Արիսողոմ աղան քալել
սկսելով բեռնակիրները գտնելու համար:
— Թէպէտե դուք զիս չէք ճանչնար՝
բայց ես ձեր գերդաստանը խիստլաւ կը ճան-
չնամ. ձեր լուսահոգի հայրն իմ լրագրոյս բա-
ժանորդ էք: Նատ բարի մարդ մ' էր, աղքատ-
ներուն ողօրմութիւն կուտար, աղքատ աղջիկ-
ներ կը կարգէր և իրեն դիմողներուն բարու-
թիւն կընէր: Ասանկ ողորմած մարդերը շատ
ապրելու են, բայց ի՞նչ օգուտ, անգուժ մա-
հը միշտ բարիները կառնէ և թող կուտալ չա-
րերն որ ազգին չարութիւն ընկն: Թողունք
սակայն հիները և ուրիշ բանի վրայ խօսինք:
Շոգենաւուն մէջ հանգիստ էիք:

— Նատ հանգիստ էի, պատուականապէս
կերալ, խմեցի և պառկեցայ, պատասխանեց
Արիսողոմ աղան քալերն շուտ և մեծ առնել
սկսելով:

— Եթէ հանգիստ չըլլալիք՝ վաղուան
լրագրուս մէջ պիտի գրէի և ընկերութեան ու-
շադրութիւնը պիտի հրաւիրէի, ըսաւ խմբա-
գիրն ետևէն վաղելով:

— Շնորհակալ եմ:
— Կաղաչեմ, ըսէք ինձի, քանի տարե-
կան էք:

— Քառասուն:

— Վաճառական էք, կարծեմ:

— Ալու, եթէ անցագիր պիտի շինել
տաք՝ հարկ չկալ, վասն զի հատ մը ունիմ:

— Զէ, վաղուան թերթիս մէջ պիտի գրեմ
որ առջի օրը Տրապիզոնէն մայրաքաղաք եկաւ
Մեծալատիւ Արիսողոմ աղա երկելի վաճա-
ռականն որ իւր լեզուագիտութեամբն և վա-
ճառականական հմտութեամբն ծանօթ է մեր
ազգայիններուն: Տաճկերէն գիտէք կարծեմ:

— Ո՛չ:

— Ֆրանսէրէն:

— Ո՛չ:

— Անգղիերէն:

— Ո՛չ:

— Գերմանէրէն:

— Ո՛չ:

— Վնաս չունի, ես լեզուագէտ պիտի
ըսեմ ձեզի համար և ձեր վրայօք գովեստով
պիտի խօսիմ:

— Ամեն Պօլիս եկաղներուն անունները
ձեր թերթին մէջ կը գրէք:

— Գրեթէ ամենն ալ եթէ ձեզի պէտ
պատուաոր ազգայիններ ըլլան:

— Պօլիսէն գացողներն ալ կը գրէք:

— Գրեթէ կը գրենք, եթէ պատուաոր

ազգայիններ ըլլան:

— Շատ լւաւ, իմ անունու ալ գրեցէք, ես
ալ պատռաւոր ազգային մեմ: Մեր քաղաքին
մէջ արտերու, եզերու, կովերու և ագարակ-
ներու տէր եմ . . . : Ասոնք ալ գրէ ըստ
այնպիսի դէմքով մը որ կը լալտնէր թէ մեծ
շահ մունէր այս խօսքերուն հրատարակու-
թեանը մէջ:

— Հոգ մի՛ ընէք. խղճի և արգարութեան
պարտք մը կատարելու համար անոնք ալ կը
գրեմ:

— Երկու երեք հատ սպասաւոր ալ ու-
նիմ . . . անոնք ալ լրագրոյդ մէկ կողմը կընաս
անցունել:

— Ինչու չէ:

— Ուկիէ ժամացոյց և շլթալ ալ ունիմ,
բայց շոգենաւուն մէջ չփողնելու համար վրաս
չառի. անոնք ալ գրել պէտք է հարցուց Սքի-
առղոմ աղան որ բոլորովին մոռցած էր սնտուկ-
ները:

— Ասոնք գրելու հարկ չկալ:

— Շատ լւաւ, բայց միւս ըսածներս լրա-
գրոյդ մէջ ամենէն առաջ դիր որ ամենքը կար-
դան:

— Այնպէս ընելու միտք ունիմ:

— Խոշոր գրելով գրէ:

Հանգիստ եղիք, ամենէն խոշոր գրե-
լով:

Միայն հարուստ մարդերուն գալն և
երթալը կը գրէք . . . այնպէս չէ:

— Ալո՞:

— Եթէ աղքատ մարդերն ալ կը գրէք
չեմ ուզեր. որ իմ անունս . . .

Բնաւ երեք, ստակ չունեցողներուն
անունները բնաւ չենք գրեր՝ նոյն իսկ եթէ
հազար ուկի ալ տուած ըլլան դպրոցի մը շի-
նութեան համար:

— Ըսել է որ գուք ամեն իրիկուն հոս
կսպասէք. Պօլիս եկաղ կամ անկից մեկնող հա-
րուստները սեսնելու և անոնց անունները
հրատարակելու համար, որպէս զի ժողովուրդն
գիտնալ թէ ով եկած է և ով գացած է . . .
տարակուս չկալ որ վաղը իրիկուն իմ անունս
պիտի կարդամ ձեր լրագրին մէջ:

— Ալո՞ ձեր հասցեն տուէք որ տեղական-
թղթատարով զրկեմ լրագէրը:

— Բէրա, Ծաղկի փողոց թիւ 2:

Շատ աղէկ, ըստ խմբագիրն և գրա-
նէն թուղթ մը հանելով բաժանորդներուն ցու-
ցակին մէջ անցուց Սքիսողոմ աղան:

— Վաղը առտու, լուսը չճշված զրկէ որ
կարդամ իմ անունս լրագրին մէջ:

— Եղբ սովորան դէմ կը դրկեմ, վասն զի
լրագիրս իրիկունները կը տպվի:
— Որչափ ուղարկը կը լավ եթէ ձեր վա-
ղուան լրագիրն առտուն տպէիք. . . բայց
վնաս չունի, իրիկուան թո՛ղ ըլլայ, բաւական
է որ անունս խոշոր գիրերով գրվի:

— Ալդ մասին հանգիստ եղէք. վաղը իրե-
կուն անպատճառ կը զրկեմ լրագիրն ընկալա-
գրով:
— Ընկալագիրնվ. . . տեղական թղթատա-
րով պիտի զրկեիք հապա . . . Ընկալագիրն ով-
է, առունս գիտէ . . .

— Ընկալագիրն թուղթ մէկ որուն մէջ
կը գըրեմ. Ընկալալ մեծալատիւ Սքիսողոմ
աղայէն . . . լրագրոյ տարեկան բաժանորդա-
գին մէկ ու կէս ոսկի, և ալդ թուղթը ձեզի
կը յանձնեմ որով տարի մը իրաւունք կունե-
նաք իմ լրագիրս ընդունելու:

— Զէ, բայց գուք բաժանորդ պիտի ըլ-
լաք իմ լրագրոյս, մէկ ու կէս ոսկի վճարելով
ինձի:

— Մէկ ու կէս ոսկի . . . շատ է. . .
երեք քառորդ ոսկի չը բաւերի:
— Խմբագիրները բաժանորդագնոյն վրայ

սակարկութիւն չեն ըներ կամ առաջ մա-
տին թուղթը, բան ամը կը ընկանք բայց ու-
ղաց. — Սակայն չկարծէք թէ ես բաժանորդ
գրելու նպատակու զձեզ տեսնելու եկալ. քան
լիցի, այդ պատկերութիւնը չեմ ընդունիր, բա-
րեկամական պարտք մը կատարելու համար
եկալ զձեզ տեսնելու:

— Յալտնի բան է:

— Բնաւ ձեր մտքէն չանցունէք թէ այս
մարդը մէկ ու կէս ոսկի վրցնելու համար զիս
տեսնելու եկաւ:

— Զեմ անցուներ:

— Վասն զի կան ինել մը մուրացկան
խմբագիրներ որք Պօլիս եկողները կողոպտե-
լու համար անոնց քովը կերթան և բաժա-
նորդ կը գրեն զանոնք. ես ալդ բանը չեմ կա-
րող ընել վասն զի բնութեանս մէջ չկայ . . .
ես իբրև պատուաւոր մարդ կուզեմ ապրել:

— Հասկալ, իբրև պատուաւոր մարդ
կուզեք ապրիլ . . .

— Ինձի հետ ձեր այս ունեցած տեսակ-
ցութիւնն ալ ուրիշի մի զրոցէք, վասն զի
տեսակ մը բազգախնդիր, չուառական անձեր
կան որք բանդագուշական կենսագրութիւններ
կը գրեն և իմ անձնականութիւնս կը խծբեն:

— Կը հասկնամ, անձնականութիւնդ կը խծբքեն:

— Օրինակի համար սա պարագալին մէջ լանցանք մ'ունիմ ես, զձեզ դիմաւորելու եկալ և խոստացայ ձեր անունը լրագրուս մէջ հրատարակել, դուք ալ իրեւ ողջամիտ ազգային մը բաժանորդ գրվեցաք. կազաչեմ, ըսէք, ձեր կոկորդը սրխմեցի որ ինձի բաժանորդ գրվիք:

— Ամենեին:

— Ատրճանակ ցցուցի:

— Բնաւ երեւք:

— Դանակ քաշեցի.

— Ոչ. բայց ուրիշ տեղեր ատրճանակ կամ գանակ ցցունելով բաժանորդ կը գրեն:

— Ատ ըսել չեմ ուզեր, սա ըսել կուզեմ որ դուք ձեր յօժար կամ քովը բաժանորդ գրվեցաք:

— Ագն:

— Եւ ես վեհանձնաբար վարվեցայ այս պարագալին մէջ:

— Տարակուս չկալ:

— Զվարվեցայ այն խմբագիրներուն պէս որք օտարականի մը Պօլիս գալն իմանալուն պէս՝ վազելով անոր տունը կերթան բաժանորդ գրելու համար:

— Այդ շուառականներն իրաւունք չու-

նին քու անձնականութիւնդ խծբքելու. . .
դուն վստահ եղիք ինձի . . . : Ճանորդ այսի
. . . Շնորհակալ եմ ձեզմէ. մնաք բարզվ
Աբիսողոմ աղա, օրնմը մեր խմբագրատունը
հրամմեցէք խահվէ մը խմելուն նորուժիւ
մարս. . . Շատ աղէկ օր մը կուգամ: Վազուակ
նին մէջ անցունելու չմոռնաք:
— Անհոգ եղէք: Արդ ամսութիւն ուն
Աբիսողոմ աղան և խմբագիրն բաժնուեցան
իրարմէ Բէրալի քառուղուոյն առջևուուը
հասած էին խօսելով: . . .
Աբիսողոմ աղան առանձին մնալով սկսաւ
ճանըան շարունակել ինքնիրեն հետեւալ խոր-
հրդածութիւններն ընելով.
. . . Ես ինքինքս չէի կարծեր ալնչափ մեծ
մարդ որչափ որ կը կարծէ ալս խմբագիրն.
բայց հարկաւ ան ինձմէ աղէկ գիտէ իմ որ-
չափ մեծ ըլլալս, վասն զի խմբագիր մ'է և
ուսումնական է . . . : Վազը լրագրի մէջ իմ
անունս տեսնողները անցուշտ իրար պիտի ան-
ցնին և հետաքրքրութիւն պիտի ունենան ին-
ձի հետ տեսնըգելու . . . վազը պէտք է որ
կիրակի օրուան հագուստներս հագնիմ և ու-
կիէ ժամացոյցս ու շղթաս ալ գնեմ. սպասա-
որներս ալ հետս բերելու էի, ով գիտէր. . . :
Ամեն մարդ պիտի իմանայ վազը որ մեծ մարդ



մը եկած է և կ. Պօլիս. ազնուախոհ, ազնուասիրտ, լեզուագէտ, ուսումնական, դաստիարակեալ, կրթեալ և լին. մէկը, և իւրաքանչիւր կնիկ պիտի ըսէ իւր էրկանը. «Մեր աղջիկը սա Աբիսողոմ աղալին տանք»: Էրիկն ալ պիտի պատասխանէ կնկանը, «Նայինք Աբիսողոմ աղան մեր աղջիկը կառնէ, անիկայ հարուստ տեղէ մը աղջիկ առնել կուզէ հարկաւ.» այս պատասխանին վրայ էրկան և կնկան մէջ վէճ մը պիտի ծագի և իրարու գլուխ պիտի պատառեն. որո՞ւ հոգ . . . : Անունիս լրագրին մէջ անցնիլն սա օգուտն պիտի ունենալ որ երկու օրուան մէջ հարուստ աղջիկ մը առնելով պիտի լրմնցունեմ ամուսնութեան գործն՝ որու համար միայն եկած եմ հոս . . . այս ամուս. . . . :

Աղիւս բեռցված էշերու կարաւանէն էշ մը բաղմբվելով Աբիսողոմ աղալին դէմ ընդմիջեց զայն իւր խորհրդածութիւններու մէջ, ուր ընկամված ըլլալով ուշագրութիւն չէր ըներ առջեւն եկող էշերուն որովք լի է միշտ Բէրալի մեծ փողոցը:

— Մէկդի կեցիր, ըստ իշավար պարսիկն Աբիսողոմ աղալին, արդարացնել ուզելով իւր էշը:

— Ատ խօսքը առաջ ըսելու էիր որ զգու-

շանալի, պատասխանեց Աբիսողոմ աղան և ճանիքան շարունակեց: Ելուսութամաց դր մասի բառ մի մաս իւր ճանապահնեան նայ մեջ Ելուսութամաս իւր ճանապահն գա և ըստի դր ամուսն մասքան ու քան մի մաս սպասածին մեջ մեջ ըստի մասքան պարագայուց մման մասքան:

Բ.

Բեռնակիրներն ոչ լսած և ոչ ալ տեսած էին Ծաղկի փողոցն, բայց քաջալերվելով կարգ մը մարդերէն որը գիտնալ կը ձեւացունեն ինչ որ չեն գիտեր և որք խիստ բազմաթիւ են մեր աղջիկն մէջ, համարձակած էին ըսել Աբիսողոմ աղալին թէ շատ աղէկ գիտէին Ծաղկի փողոցը:

Բեռնակիրներուն ալս յանդգնութիւնն այնքան պասաւելի չէ որչափ այն մարդերունն որ խոհարարութիւն ուսած են և բանադատութիւն կընեն կամ քիչ մը երկրաչափութեան պարապած ըլլալով աստղերուն շարժումներուն վրայօք կը ճառեն կամ երկու սագ և չորս կով մեծցուցած ըլլալով դաստիարակութեան խնդիր կը լուզեն կամ զաւակ մ՛ունեցած ըլլալով առաջին մարդուն որ աշխարհի մէջ ծնած ըլլալուն վրայ կատենաբաննեն կամ վերջապէս անանկ նիւթի մը վրայ կը խօսին որ բոլորովին օտար է իրենց. ալո՛, այս մար-

գերուն լանդգնութիւնն աւելի պարսաւելի է,
վասն զի բանադատութիւնն կամ աստղագիւ-
տութիւնն կամ մանկատածութիւնն ևն ծաղ-
կի փողոց չէ որ ուրիշներուն հարցնելով ան-
միջապէս սորվի մարդ: Եւ արդարե բեռնա-
կիւներն ամեն քալլափոխին՝ իրենց դէմն ել-
նողներուն հարցունելով անմիջապէս գտան
ծաղկի փողոցն և թիւ 2 տան դուռը զար-
կին, մինչդեռ ես շատ ատենաբաններ մտիկ
ըրած եմ որ եօթը ութը ժամ շարունակ խօ-
սելով չեն կարողացած իրենց փնտուած փո-
ղոցը գտնել և ստիպված են ուրիշ փողոցնե-
րու մէջ թափառիլ և թափառեցընել իրենց
ունկնդիրներն անոնց քթէն բռնելով:

Բեռնակիւները դուռը զարնելնուն պէտ
դուռը բացվեցաւ և ներկայացաւ իրենց թուխ
և երկար դէմքով կին մը որուն դէմքին վրայ
ժամանակն ալնքան գծեր գծած էր զայն սրբա-
գրելու համար որքան որ կը գծէ Մասիսի
խմբագիրն իւր չորս տող մէկ ձեռագրին վրայ
որ կամ մէկուն վախճանիլը կիմացունէ և կամ
ուրիշի մը կարգվելը:

Բեռնակիւները դռնէն ներս մտնելով բեռ-
ները գետինը ձգեցին և սկսան իրենց քրտին-
քը որբել:

— Արիսող աղախին ըլլալու են ասոնք,

այնպէս չէ, հարցուց բեռնակիրներուն թխա-
դէմկաթիվնը: աչքի ունիւն միջը ու

— Անունը չըսաւ մեզիւս պատասխանեց
բեռնակիրներէն մին ակ թաշկինակովն գլխուն
քրտինքը որբելը շարունակելով: չից ու մցից
ի՞նչ տեսակ մարդ էր: մաս ու զանա՞
իոցը թիկնոց մը հագած էր: մինը
— Ի՞նչ զոյնով էր, ճերմակ թէ թուի:

— Ոչ, սև էր: մայր նորույնը —
մարս մը էր: մինքն զանութեալ —

— Ալո, սև բայց ազաւոր, անոր փաթ-
առվազը ձմեռը չմտիր: ունիւն մայիս Ս

— Աս ի՞նչ խօսք է, փաթառվիլն ի՞նչ պի-
տի ըլլայ: աս քուկին գիտցած կնիկներէն
չեմ, հասկցար, ըսաւ տիկինը իւր խօսքերը շեշ-
տելով:

— Վնասակար բան մը չըսի, փաթառվե-
լով ի՞նչ կըլլայ եզեր, պատասխանեց բեռնա-
կիրն աթոռի մը վրայ փոելով իւր թաշկի-
նակն:

— Ատկէ աւելի վնասակար ի՞նչ կրնալ
ըլլալ:

— Շատ բարակ բաներու մեր խելքը
չպառկիր:

— Ես կը պառկեցունեմ . . . դուն զիս
կը ճանչնաս . . . ազմայինուն:

— Փաթաթվելէն ինչ վնաս կռւգայ: ամլա
— Ես էրեկ ունիմ, ինչու պիտի փաթ-
աթվիմ եղեք անոր: ասոց զմուռ: —
— Երեկ ունեցողներն ալ կը փաթալին,
էրեկն ուրիշ առ ուրիշ. աս կը տաքցունէ:
Ըսենք որ ձմեռը գիշեր մը դուրս ելար, փո-
ղոցին մէջ էրկանը չես կրնար փաթալի,
բայց աս կռնակդ կառնես: այ այ: —
— Արխողոմ աղան: այ ան այ: —
— Թիկնոցը, տիկին . . . Արխողոմ աղան
կռնակի վրայ կառնվմ: այ ան այ: —
— Մինչև հիմայ թիկնոցի վրայ կը իս-
սէիր: այ այ այ այ: —
— Խօսքերնիս թիկնոցի վրայ չէր մի առ.
Հապա դռւն ինչ հասկցար: այ այ այ: —
— Ես հասկցալ որ Արխողոմ աղանին
փաթաթվելու է կրնես: —
— Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր Ա-
տուած, ըսաւ բեռնակիրն թաշկինակը քաշե-
լով աթոռէն: —
Տիկինն բեռնակրին սուած բացատրու-
թենէն գոհ ըլլալով՝ հրամայական եղանակաւ
մը ըսաւ: —
— Սա անկողինն և սնտուկները վեր հա-
նեցէք: ամ ամ ամ ամ ամ ամ ամ ամ
— Բեռնակիրներն հնազանդելով բեռ-

ներն նորէն վերցուցին, և հաղիւ թէ սանդու-
ղին առաջին աստիճանին վրայ կոխած էին
տիկինն պօռաց: այս այ այ այ: —
— Ուզու կանէն եկաք դուք: ամ այ այ այ
— Ուզ, մեծ վողոցէն եկանք: այ այ այ այ
— Գիտեմ ոոր մեծ վողոցէն եկաք, այդ
ոտքի ամաններով վերսկելնըվի, տեսէք ինչ
ըրիք տախտակներս, ես այսօր սըբեցի զանոնք
և հոգիս բերանս եկաւ: ամ այ այ այ այ
— Ինչ ընենք, ուրիշ ոտքի աման չու-
նինք: — Ինչու կաներ երեսսկը նայիք, հա-
նէք տըւոնք: ամ այ այ այ այ այ
— Մի պօռար, տիկին, մի պօռար, կը
հանենք: ամ այ այ այ այ այ այ այ
— Հանեցին իրենց ոտքի ամաններն որք
աւելի մաքուր էին քան իրենց ոտներն: այսին
— Այդ ոտքերով վեր պիտի ելնէք,
կրինեց տիկինն: — Ուրիշ ոտք ունինք, այս ոտքերով պի-
տի ելնենք, պատասխանեցին պանդուխտներն
այնպիսի խեղճուկ կերպով մը որ կարծես թէ
իրենց աղքատութեան պատճառաւ երկու ոտ-
քէն աւելի չէին կրցած ունենալ, և որպէս թէ
հարուստներն չորս, հինգ կամ վեց ոտք ու-
նեցած ըլլալին:

— Արքան Վահրամիջէք, մշեմ ոռզեց, լգետինը ձգես
յէք, ես կը տանիմ: միմանդսուս միջնուս միջ

— Ատանկ աւելի աղէկ կը լայ: լուսիւս:

— Ահ. ես ինչ ըսեմ իմինիս մոր գործի
չերթար, և պատուընէ մինչև թրիկուն սրճա-
րանները կերթալ կը ննտի, ազգային գործե-
րու վրայ կը խօսի, զիս ասանկ փաեղճ կը թո-
ղու և ալ կատիպվիմ տունս մարդ գնելու
մումուց ինքնիրեն տիկինն և սանդուղին առ-
ջեւդրված թաց լաթով մը անդուղին առա-
ջին աստիճան սրբել սկսաւ:

— Տիկին, մենք սպասենք պիտի . . .

— Եթէ խելքը գլուխը մէկն ըլլար՝ ջա-
րունակեց տիկինն ինքնիրեն, ես հիմա թա-
գուհիի մը պէս կեանք կանցունէի, զաւակ չու-
նիմ, թանջունիմ. բայց ինչ ընեմ որ խելքը
միտքը թաղական ընտրելու և թաղական վար
առնելու վրայ է: Աստուծմէ գտնան այն թա-
ղականներն ալ որ ամենուս խեղճութեանը
պատճառ կը լանկոր: Ինչուդա պէտք քուկին,
տնաշէն, ուզող նստի, չուղող չնստի, դուն

մնացիր այս աղջին գործերը շտկան:

— Տիկին, մեր իրաւունքը տուր որ եր-
թանք, պարապ տեղը չսպասենք հոս, ըսին

— Վաղը եկէք, պատասխանեց տիկինն.

և քեռնակիրներն, որք վաղ ըլլարոն ամեն
օր լսելու վարժված էին, տիկինոց պատասխա-
նին վրայ գունէն գուրս ելան:

Թաղականի մը ետևէն է ինկեր, շա-
րունակեց տիկինն դարձեալ, և բնաւ չմտմտար
որ ուտելու համար հաց պէտք է, միս պէտք
է, եղ պէտք է, բրինձ պէտք է, զանոնք եփե-
լու համար փայտ պէտք է, ածուխ պէտք է,
ասոնք բնաւ չը հարցուներ, առտուն լուսը
չճղքված կերթալ և իրիկուան մութան կու-
գայ: Ահա հիւրենիս ալսօր եկած է, և ժա-
մէ մը հոս պիտի գայ հարկաւ անօթի է
մարդն, առջևը բան մը հանելու է որ ուտէ
և մենք բան մը չունինք, վասն զի իրիկուն-
ները տուն եկած ժամանակը կաոր մը միս
կամ ձուկ չբերեր որ տունին մէջ կերակուր
գտնվի. . . թաղականէն ուրիշ բան չունինք
տուներնուս մէջ, ամեն իրիկուն թաղական. . .

Տիկինն գեռ դիառղութիւններն լմնցու-
ցած չէր: և ահա եօթանասունի մօտ մարդ
մը որ բանալիով բացած էր գուռն՝ ժպիտով
ներս մտաւ և բարեեց տիկինը: Այս մարդը
տիկինոց ամուսինն էր: Իւր խորշումած կունտ
ճակատն չափէն աւելի գուրս ցըցուած էր և
այնպիսի դէմք մը ունէր որ կարծես թէ մէկն
գայն կը խտղտէր:

Այս մարդու հաղիւ թէ դրան սեմէն ներս
ոտք կոխած Եր կինն առցեն ելնելով հարցուց
անոր. — Ուր էիր մինչև Հիմայ մարդ Աս-
տուծոյ: — Զես լսեր, կնիկ, թաղականին գործն
ալ այսօր լմնցուցինք. կիրակի օրը քուէարկու-
թիւնը պիտի կատարվի, և բոլոր անդամները
պատուաւոր մարդիկ պիտի ըլլան: Թորոս աղան
ինձի քանի մը օդի խմցունելով ետևէս ինկաւ
որ իւր ուզած մարդոցը քուէ տամ, բայց ես
իմ մարդոցս առեի, վասն զի իմ մարդիկս ինձի
ամեն գիշեր օդի կը խմցունեն և շատ բարի
և պատուաւոր մարդիկ են, ուրիշներուն պէս
թաղին սնտուկէն ստակ չեն գողնար և դպրոցն
ալ. — Այդ խօսքերուն առենը չէ Հիմա, շուտ
մը գնա, կտոր մը միս առ: — Թորոս աղան քիչ մը սրզողեցաւ և
ասկից վերջը հետա սքամ պի լ չպիտի խա-
ղալ, թող չխաղալ . . . : — Ես քեզի ինչ կըսեմկոր . . . շուտ ըրէ,
գնա: — Ես ալ տիրացու Մարտիրոսին հետ
տամա կը խաղամ ասկից ետքը . . .
— Այդ խօսքերը վերջն ալ կընենք, Մա-

նուկ աղա, գնա մսակաճառէն քիչ մը միս առ
ու բեր: — Տիրացու Մարտիրոսին գլխուն եկածը
չես ըսեր, կնիկ. խեղճին կինն այս գիշեր մազ
մնացեր է ոոր մեռնի եղեր . . . : — Ինչու:
— Մանչ մը բերեր է. բայց շատ դժուա-
րութեամբ. չորս գայեակ և տասնեւթեց բժիշկ
Հազիւ կըցած են տղան առնել: — Խեղճ կնիկ . . .
— Վազը քիչ մը գնա զինքը տես: — Կերթամ, Հիմա դուն գնա սա միսին
գործը լմնցուր: — Այս գիշեր անպատճառ միս պէտք է:
— Հապա, Աբիսողոմ աղային անկողինն
ունստուկները բերեն՝ ինքն ալ Հիմայ կու-
գալ: — Իրաւ կըսես, կնիկ: — Սուտ ինչու պիտի խօսիմ: — Եատ աղէկ ուրեմն, երթամ պատուա-
կան միս մառնեմ ու գամ: — Մանուկ աղան անմիջապէս տունէն դուրս
ելաւ և հազիւ թէ քանի մը քայլ առած Եր՝
կինը ետևէն պօռալ մկատը. — Մանուկ աղա, Մանուկ աղա . . .
Մանուկ աղան ետ դարձաւ.

Սա սիւն Միան ինչով պիտի եփենք, այդաբցուց կինք:

Կուզես գետնախնձորով եփէ, կուզես լուբիսլով: ոյս մայթ մեծամայթ ուժով որսոց սաշ

— Առ չէ, իմ ըստամածուի չըսնինք, քիչ մ'ալ ածուխ առնէիր:

— Շատ աղեկ, պատասխանեց! Մանուկ աղա և սկսաւ երթալ:

— Մանուկ աղա, Մանուկ աղա, կանչեց տիկինք նորէն:

Ետ դարձաւ Մանուկ աղա:

— Աղեկ ա, մինակ միսով չըլլար, քիչ մ'ալ բրինձ առ որ ապուր մ'ալ շինենք: ճնոր Աղեկ ըսիր, կնիկ, քիչ մ'ալ բրինձ առնենք:

Մանուկ աղան այս անգամ վազելով սկսաւ երթալ. փողոցը դառնալու վրա էր՝ երբ կինն բոլոր ձախովն ետևէն գալն կանչեց:

— Մանուկ աղա, Մանուկ աղա... Ման...

Կանգ առաւ երիկն և վերստին ետ դարձաւ այս անգամ դէմքին զուարթութեան վրա քիչ մը զեղզ ընելով:

— Ի՞նչ կուզես... . . .

— Մարդ Աստուծոյ, շոգեկառքի պէս կը վազես, ձախս մարեցաւ: Սոխ չունինք, աղ ալ չունինք, քիչ մ'ալ կազ կամ ճրագ առնե-

լունէ որ վառենք, ամարդը մութունս պիտի նստեցունենք:

Աղեկ ա, ամենը մէկէն ըսէնոր նստալ ըավաճառին երթամ և պէտք եղածներն առն նեմ. հարիւր անգամ ետևէս կանչեցիր:

— Զուրի շիշ ալ չունինք ուն: գլուխս կապելու քան մը չունիմ, ոտքս հագնելու կոշիկ չըկալ, այս վիճակին մէջ ինչպէս Արփառ զոմ աղային դէմը ելնեմ: այս մայստ միտուաք Հիմա ուտելիքը առնենք, վաղն ալ հագնելիքը կը մտմտանք ըստաւ Մանուկ աղան և գուռն ուժով մը քաշելով գուրս ելաւ:

— Մանուկ աղա, Մանուկ աղա! . . .

— Ուղածիդ չափ պօռա, աղ ետ չեմ դառնար մոմուաց Մանուկ աղան և ճանբան շարունակեց:

Մանուկ աղան քանի մը փողոց դարձած էր՝ երբ կնկան ձախն մը առաւ որ զինք կը կանչէր.

Թործ չունիս նէ պուալով ետևէս վազէ ըստ ինքնիրեն Մանուկ աղան, առանց գլուխն ետ դարձնելու տեսնելու համար թէ ով էր զինք կանչողը:

— Մանուկ աղա, Մանուկ աղա, կը կնեց ձախն որ Տիրացու Մարտիրոսին ըստանամեալ աղջկանն էր:

Մանուկ աղան շարունակեց իւր ճանբան,
և Տիրացու Մարտիրոսին աղջիկն՝ քայլերն փուռ
թացընելով՝ տառը քայլ հեռաւզը թեամբ
մօտեցաւ անոր։ Խեղճին շունչը կտրած ըլլա-
լով՝ անգամմ’ալ կրցաւ պօռալ։

— Մանուկ աղա։

Դարձեալ պատասխան չառաւ և ստիպ-
վեցաւ քիչ մ’ալ քայլելով Մանուկ աղային հա-
գուստին ծալրէն քաշելու։

— Թող տուր, կնիկ, ըստ Մանուկ աղան

առանց ետեր նայելու։

— Բան մը պիտի ըսեմ։

— Մտիկ ընելու ժամանակ չունիմ. ըսած-
ներդ արդէն չեմ կրնար միտքս բռնել, հիմա
ելեր ուրիշ բաներ ալ պիտի ըսես . . .

— Դայեակին տունը պիտի հարցունէի . . .

Դա յ ե ա կ բառը լսելուն պէս արթնցաւ
Մանուկ աղան և ետեր Տիրացու Մարտիրոսին
աղջիկն տեսնելով.

— Աղաւնի, դուն էիր ետևէս վազողը,
հարցուց անոր.

— Ա . . . յո . . . ես . . . պատաս-
խանեց Աղաւնին որ հեալէն ալ չէր կարող
խօսիլ։

— Մարդ ինչպէս է։

Աղաւնին կը հեար։

— Զըսես, մարդ ինչպէս է . . . գժբախ-
տութիւն մը պատասխանն հեալ էր . . .

Աղաւնին բոլոր պատասխանն հեալ էր . . .

— Հետաքրքրութենէս պիտի ճաթիմ . . .

չըսէս աղջիկ, հեալու ժամանակ է և հիմակ,
մայրը ինչպէս եղաւայ առնայն յանձնական

— Մայ մարդի կա . . . առաջ զէկ . . .

է բայց . . . տը . . . զան . . . ծիծ ըլ . . . բու . . .

ներ . . . կոր . . . գագա . . . լեակը . . . պի . . .

տի . . . ։ անձ պրոցդեման անձու . . . զա ծովա

— Շատ լաւ, շատ լաւ, աղջիկս, դուն

տուն գնա, գայեակն ես կը զըկեմ։

Աղաւնին բաժնը վեցաւ Մանուկ աղայէն
որ ճանբան փոխեց գայեակին տունը փնտու-
լու համար։

Զուզելով մեր ընթերցողին ճանձրոյիթ

պատճառել կը թողունք Մանուկ աղան՝ որ
ամեն քայլափոխին բարեկամի մը կը հանդի-

պէր և անոր կը ծանուցանէր կամ թաղակա-
նին ընտրութիւնը կամ Տիրացու Մարտիրոսին

կնկան մանչ զաւակ մը բերելն կամ Արիսո-
գոմ աղային գալը։ Դառնանք հիմա Արիսոգոմ
աղային։

ամայեր . . . չ ոչիշմայ բյուս անցաւ —
Պատասը զն մ է ի ելուս
 յամ մանականամ դպոյ միմ առ Ա
 Բաւական երկար տարիներէ ի վեր սովո-
 րութիւն եղած է որ շատերը ուսում առնե-
 լու համար ֆրանսա կամ Ինգլանիա երթա-
 լէն ետքը մայրաքաղաքս կուգան կին առնե-
 լու համար, և ընթերցողն ալ գիտէ արդէն
 որ Արքիսողոմ աղան ալ ուրիշ նպատակաւ
 եկած չէր Կ. Պօլիս: Ընթերցողն չմոռցաւ նաև
 թէ ալ ամուսնութեան խնդիրն որչափ միտ-
 քը գրաւած էր Արքիսողոմ աղալին՝ որ առջե-
 ւէն եկող էշէրը չտեսնելով անոնց միոյն դէմ
 բաղիւթեցաւ: Թերևս հարցվի թէ՝ Արքիսողոմ
 աղալին դէմ բաղիւթող աւանակն ալ ամուս-
 նութեան վերաբերեալ գործ մունէր որ իւր
 առջեւը չտեսաւ Արքիսողոմ աղալին պէս խոշոր
 մարդ մը: Անոնք որ պատմութեան քիչ կամ
 շատ ծանօթութիւն ունին՝ գիտեն որ էշէրը
 որոնց նախահալրերէն մին ժամանակաւ հրեշ-
 տակ տեսած է, բնաւ կարեւորութիւն չեն տար
 մահկանացուներուս, և կուզեն որ միշտ մենք
 ճանբար բանանք իրենց: Արքիսողոմ աղան եթէ
 պատմութեան տեղեակ ըլլար՝ կամ կին առ-
 նելու խնդիրով միտքն չզբաղեցունէր՝ անշուշտ
 ճանբար պիտի բանար ալդ արարածներուն որք

իրենց ականջներով Միդաս թագաւորին ներ-
 կայացաւցիչներն ըլլալու պատիւն ալ կը վա-
 յելեն:

Արդ, Արքիսողոմ աղան էշէրէն բաժնըվե-
 լէն ետքը Ծաղկի փողոցը գտնելու համար
 անոր ասոր հարցումներ կուղեր. վասն զի
 ինքն առաջին անգամ էր որ Պօլիս կուգար և
 Տրապոն բնակող բարեկամներէն մին խոր
 հուրդ տուած էր իրեն թէ հանգիստ ուտելու
 և պառկելու համար լիշեալ փողոցը լիշեալ
 թիւը կոող տունն իջնալու էր: Արդ բարե-
 կամն շաբաթ մը առաջ Մանուկ աղալին ալ
 նամակով իմացուցած էր որ Արքիսողոմ աղան
 իրեն տունը պիտի ընակէր: Արքիսողոմ աղան
 իրեն տըրված տեղեկութիւններուն համեմատ
 մէկ փողոցէն կը մտնէր միւսէն կելնէր, եր-
 բեմն ալ սխալմամբ անել փողոցներու մէջ կը
 մտնէր, կը բարկանար, ետ կը գառնար և մէկ
 կողմէն ալ կը կասկածէր որ բեռնակիրներն իր
 անկողինն և սնտուկներն առնելով չփախչէին,
 թէպէտ և անոնց հաւատարմութիւնն շատե-
 րէն լսած էր:

Ժամու մը չափ հէքալի փողոցները չա-
 փելէն ետքը Արքիսողոմ աղան լաջողեցաւ վեր-
 ջապէս գլանել Ծաղկի փողոցն զոր շփոթելու
 չէ նոյն անունը կոող փողոցին հետ որ հէ-

ըալի հրդեհէն մոխիր գարձած էր հազար ու-
թը հարիւր եօթանասունը չեմ լիշեր քանիին:
Այս փողոցն ծաղկի փողոց կանուանվէր սա
պատճառաւ որ հոն բոլոր տուներուն պատու-
հաններուն առջև միշտ ծաղկներ կը գըտ-
նըլիէն:

— Երկու թիւն որն է հարցուց առանց
գիտնալու Մանուկ աղալին կնոջը որ դրան
առջև իւր էրկանը գալստեանը կսպանէր:

— Աս է, հրամմեցէք Սբիսողոմ աղա,
պատասխանեց տիկինը:

— Անկողինս և սնտուկներս բերին:

— Բերին, Սբիսողոմ աղա. վեր հրամմե-
ցէք Սբիսողոմ աղա, եթէ կուզէք քիչ մը հոգ-
նութիւն առնելու համար սա պղտիկ սենեա-
կը նստեցէք ըստւ կինը գետնաբարկի վրայ
պղտիկ խուց ձը ցուց տալով:

— Շատ հոգնած եմ, քիչ մը հոս կը
նստիմ:

— Զեր կամքն ինչպէս որ կուզէ այնպէս
ըրէք, Սբիսողոմ աղա. տունը ձերն է Սբիսո-
ղոմ աղա. ձեր տունին պէս հանդիստ ըրէք:

— Շնորհակալ եմ:

Սբիսողոմ աղան պղտիկ սենեակը մտաւ
առաջորդութեամբ տիկնոջ որ զամբար մը
բռնած էր որուն կազը հատնելու վրայ էր:

— Ի՞նչպէս էք, Սբիսողոմ աղա, տունէն ինչ-
պէտք էն աղէկաննաւ ծորդ վեխուս սրբան
ուն ։ Աղէկ են: Պատուի մաս սիստի յարդաք
մաս ։ Թողարկէկ ըլլան ձեր զամբակներն ինչ-
պէս են Սբիսողոմ աղա, դպրոց կերթաննափ դր
ջն ։ Ձաւակ չունիմ: Ճ ոչիւս ցամս միջու
— Զեր տիկինն ինչ կընէ աղէկ է, Սբի-
սողոմ աղա: Արա նարայի նայարաւ ։

— Տիկին չունիմ գեռ: Վասի ունի մինչուս
— Կարգված չէք, Սբիսողոմ աղա: յիս մա
— Ձէ: Անձաւը մամել առարկան ։

— Շատ լաւ, հոս աղուորիկ աղջիկ մը
գըտնենք ու պօլսեցի ընենք քեզի Սբիսողոմ
աղա: այս առջանակարգութիւնը առաջանակարգութիւնը

— Անանկ միտք մը ունինք, պատասխա-
նեց Սբիսողոմ աղան. բայց աղջիկէն առաջ ես
կերակուր կուզեմ, վասն զի առտուընէ: ի վեր
բերանա բան գըած չեմ:

— Շատ աղէկ, Սբիսողոմ աղա, շատ աղէկ.
Հիմայ կը բերեմ ձեր կերակուրն:

— Տիկինը գուրս ելաւ և դուռը բանալով
ունմին վրայ կայնեցաւ սպասելու համար Մա-
նուկ աղալին որ ինչպէս կը լիշեն ընթերցող-
ները գալեակ փնտուելու գացած էր:

Սբիսողոմ աղան սենեակին մէջ միակ
մնալով բարձի վրայ դրված Զէն հոգեւորն առաւ

Եթեղթատել սկսաւ զայն, բայց որովհետեւ
մարդս անօթի եղած ժամանակը գիրք չկրնար
կարգալ ինչպէս նաև չկրնար գիրք գրել՝ նո-
րէն բարձին վրայ դրաւ Զէն Հոգեորմ՝ վասն
զի փորն կիմացունէր իրեն թէ Զէն Մարմնաւ
որին պէտք ունէր, և սկսաւ սենեալին մէջ
ալտընելու:

— Կաղաչեմ, Աբիսողոմ աղա, որ նձեր
տունին պէս հանգիստ ընէք, ըստամիկին սե-
նեալը մտնելով:

— Անհանգստութեան պատճառ մը չու-
նիմ, միայն թէ անօթիւնմ ևս կերակուր ու-
տել կուզեմ:

— Կերակուրդ պատրաստվելու վրայ է,
հիմա պիտի բերեմ, ըստամիկինը և դուռս
ելաւ նորէն դրան առջև էրկանը սպասելու
համար:

— Ի՞նչ տեսակ կնիկ է այս, ըստամի
սողոմ աղան երբ առանձին մնաց, զիս անօթի
կը պահէ և կը պատուիրէ որ հանգիստ ըլ-
լամ, անօթի մարդը հանգիստ կընալ ըլլալ...

— Սեպէ թէ ես ալ քու քոլրդ եմ կամ
աղջիկդ եմ, ըստ վաթսնամեալ տիկինը դար-
ձեալ ներս մտնելով, եթէ բան մը ուզես՝ մի
քաշվիր, ըստ ինծի որ բերեմ:

— Նորհակալ եմ:

— Ես կուզեմոմք իմ ատունսաւեկող հիւ-
բերը չընեղվին; զայ նար նորովիլ

— Կը հասկնամ. այ հիմակնէ հիմաւ կերա-
կուրէն ուրիշ բան չեմ ուզեր: Աշոյ ո—

մյաք մաս կերակուրը պատրաստվելով վրայ է,
հոգ մի լնէք ու քանդականամ խայանի

Տիկինը գեռ պիտի շարունակէրակուր բա-
նակցութիւնն, բայց դուռը զարնվելով գուրս

վագեց շուտով որպէս զի դուռը բանայ, էրի-
կը դիմաւորէ և բերած պաշարներն առնէ ու

կերակուրեփէ: Ու մասնաւ պայմանագիր լոյնուն
— Ողջուն, Տիկին, ըստարյամէկը դուռը
բացվելուն պէս:

Հարկ չկայ ըսելու թէ եկողը կրօնաւոր
մէք, ինչու որ անոնք միայն կը Պործածեն

ծողջ ու նը: Օրհնեամ տէր, այս այս այս այս այս

— Օրհնեամ տէր, պատասխանեց տիկինը:
ապ

— Ի՞նչպէս էք, աղէկ էք, տիկին: Հայու

— Փառք Աստուծոյ, Տէր Հայր: Հայու
ըմբույթ Մանուկ աղան հիմայ դէմս ելնելով

իմացուց որ հիւր մը եկած է ձեզի ալսօր, ես
ալ եկայ որ հետը տեսնըվիմ:

— Շատ աղէկ ըրեր էք, ներս հրամմե-
ցէք Տէր Հայր, ըստ Տիկինն ցոյց տալով խուցն

որուն մէջ Աբիսողոմ աղա իւր անօթութեամ-
բը կզբաղէր:

Քահանայն ներս մտաւ: որ ով —
Սբիսողոմ աղան ոռք ելաւ: թիւնց զյադ
— Ողջոն, Սբիսողոմ աղաւ:
— Օրհնեա, Տէր Հայր: ոչ շնոր մժորու
— Մեղաւորս ձեր բարեպաշտութեան գալն
իմանալով՝ աճապարանօք եկայ ձեր ջերմեռան-
դութեան պատուական որսլիսութիւնը հարց-
նելու. ինչպէս էք, Սբիսողոմ աղաւ:
— Աղեկ ենք: որ ուրիս խուռաց ըմբաս
— Միշտ աղեկ ըլլաք, Տէր Սստուած ձեր
մեռելոց արքալութիւն և կենդանեաց առուխու
երկարու պարգաեացէ:

— Շնորհակալ եմ. դուք ինչպէս էք, Տէր
Հայր: որովհ ինչ այսու այս ինչ
— Մեր աղեկութիւնը մի հարցունէք...
ժամանակիս աղեկութիւնը... Տէր Սստուած
զձեղ լամենայն փորձանաց և ի չարէ աղատ
պահեացէ. ժողովուրդն երբ աղեկ ըլլալ՝ քա-
հանայն երուն ալ երեսը կը ինդալ:

— Այնպէս է Տէր Հայր, պատասխանեց
Սբիսողոմ աղան իւր աչերն չզատելով բնաւ-
խուցին դռնէն, ուսկից կերակուր կը յուսար:
— Օրհնած, ժամանակը շատ գէշ է, ժո-
ղովուրդը շատ նեղութիւն կը քաշէ, այս պատ-
ճառաւ ջերմեռանդութիւնն ալ օր ըստ օրէ
պականելու վըրալ է:

— Իրաւ է:
— Բայց ինչ պիտի ընենք, ինչ կուգալ
մեր ձեռքէն համբերելէն զատ... Սուրբ Գիր-
քը կըսէ. որ համբերեսցէ իսպառ նա կեցցէ:
— Այնպէս է:
— Եթէ չհամբերենք՝ բարկանալ պէտք
է, և մարգարէն կըսէ. Բարկանալք և մի մե-
ղանչէք:
— Ճիշդ է, պատասխանեց Սբիսողոմ աղան,
որուն ականջը բնաւ չէր մտներ քահանալին
խօսքերը, և որ քահանալին ներկայութենէն
խեղութիւն կիմանար. վասն զի, ինչպէս գի-
տեն ընթերցողները, կերակուրէն ուրիշ բանի
պէտք չունէր.
— Զի ոչ հացիւ միայն կեցցէ մարդ այլ
բանիւ Տեառն:
Քահանալին քթախոտիւ տուփը ծոցէն հա-
նեց և երկու մատերովը քթախոտ լեցուց քթին
ծակերուն մէշ, և լետով, տուփը Սբիսողոմ
աղալին երկնցընելով:
— Հրամմեցէք օրհնած. ըսաւ:
Սբիսողոմ աղան շնորհակալութեամբ առաւ-
տուփն և քիչ մը քթախոտ քաշեց:
— Քիչ քաշեցիք Սբիսողոմ աղա, կաղա-
չեմ անգամ մալ քաշեցէք, քթախոտը վնա-
սակար բան մը չէ:

Սբիսողոմ աղան անդամ մ'ալ քաշեց որ-
պէս զի խօսքը չերկարի և հիւրը մեկնի:
— Ինչո՞ւ աղէկ մը չէք քաշել Սբիսողոմ
աղա, կընեց քահանայն, շատկէկ քաշեցէք:
— Ենորհակալ եմ, Տէր հալր, սովորու-
թիւն չունիմ:
— Կը խնդրեմ, մեղաւորիս խօսքը մի
կոտրէք, քիչ մ'ալ քաշեցէք:
— Ա՛լ չես քաշվիր ըստ Սբիսողոմ աղան
մէկուսի և քիչ մ'ալ քաշեց:
— Դաւիթ մարգարէն կըսէ որ՝ մարդոյ
որպէս խոտոլ են աւուրք իւր . . .
— Քթախոտին համար կըսէ:
— Զէ, մեզի համար կըսէ . . . և մենք
աշխատելու ենք որ այս վաղանցուկ կեան-
քին մէջ ուրիշներուն բարիք ընենք, աղքատ
տնակները ինամենք, և երեմն ալ մեր ննջե-
ցելոց հոգւոյն համար աղօթենք:
— Ալնպէս է:
— Պատրաստ գտնըվելու ենք որ կանչ-
վելնուս պէս երթանք:
— Իրաւ է:
— Մեղաւորս պիտի համարձակին խնդիրք
մը ընել ձեր բարեսլաշութեանը և կը յու-
սամ որ չէք մերժեր, վասն զի ձեր բարեսլաշ-
տութիւնը և ջերմեռանդութիւնը շատ աղէկ

կը ճանչնամ մեղաւորս: զօնիս յա՞ն
— Հրամմեցէք: ըմբանանար գլուխ
— Տէր Աստուած իւր անսպառ գանձը
միշտ բաց պահէ հրամանոցդ պէս ջերմեռան-
դներուն: ան գլուխոք անձնիոց
— Ենորհակալ եմ: այս պատիք բարձր
— Մէկուն տեղ հազար տալ, հազարին
տեղ միլիոն տալ ի շինութիւն Սբ.ասէկեղե-
ցւոլ և ի փառը ազգին: Խնդիրքն սա է որ
յառաջիկայ կիրակի կուզեմ ձեր ննջեցելոց հո-
գուն համար պատարագ մատուցանել: Ներե-
ցէք համարձակութեանս, բայց իմ պարտքս է
միշտ իմացունել որ ննջեցեալները մոռնալու չէ:
— Իրաւունք ունիս Տէր հալր:
— Սրդ եթէ կուզէք՝ ըսէք որ ես ալ
անոր համեմատ կարգադրութիւն մը ընեմ:
Զկարծէք թէ ծախքը մէկ մեծ բան մ'է, եր-
կու ոսկիով կը լըմբնայ: Նոյն օրը յատկապէս
ծանուցում ալ կընենք եկեղեցւոյ մէջ որ վասն
հոգւոցն ննջեցելոց Սբիսողոմ աղալին է նոյն
աւուր սուրբ և անմահ պատարագը:
— Ենորհակալ կըլլամ:
— Բան մը չէ, մեր պարտքն է:
— Հրամմեցէք, երկու ոսկին առէք, ըստ
Սբիսողոմ աղան, քսակէն երկու ոսկի տալով
քահանալին.

— Թող ալսօր մնար . . . ինչու աճապարեցիք, պատասխանեց քահանայն ձեռները բանալով: ուսկամ զայ ճառամ զայ

— ԶԵ, առէք:

— Որովհետեւ կստիպէք՝ ես ալ կառնեմ սիրտը չկոտրելու համար: Օրհնեալ ըլլաք. Տէր Աստուած ձեր տունը միշտ չէն պահէ, ձեր քսակը միշտ լեցունէ, ինչ որ ունիս սրտիդ մէջ Տէր Աստուած կատարէ, գործերուդ յաջողութիւն տալ և ամեն փորձանքներէ ազատ պահէ:

Քահանայն բարեմալթութիւնները լմնցներուն պիս մնայք բարեաւ ըսելով դուրս ելաւ:

— Վերջապէս խալսեցալ, ըսաւ ինքնիրեն Արփողամ աղան, աս մարդուն ձեռքէն. աս ինչ փորձանքներ են որ կուգան գլուխս ալսօր՝ Պոլիս ոտք կոխելէս ի վեր: Նոգենաւէն հազիւ դուրս ելած էի՝ խմբագիրին մէկը երկու ժամ գլուխս ցաւցուց, անլիյ զատվեցալ և մինչեւ որ տունը գըաալ հազար նեղութիւն քաշեցի: Տուն եկալ որ քիչ մը շունչ առնեմ և կերակուր ուտեմ. տանտիկինը զիս անօթի կը պահէ և միշտ ներս կուգալ կաղաչէ ինձի որ բան մը հոգ չընեմ և հանգըստութեանս նախիմ: Աս ալ հերիք չէր և ահա ալս մարդը կուգալ՝ բոնի քթախոտ քաշել կուտալ ին-

ձիւմ Դաւիթ մարգարէէն խօսք բանալով երկու ոսկիս կառնէ կերթայ. երթայ բարով: Այս ամենը քաշեցինք անօթի փորանց: Բայց սա կերպակուրս ինչու համար չեն բերեր: ալս գիշեր անօթի պիտի պահեն զիս . . . առ ինչ խալսառակութիւննէ:

Այս հարցումներն կուգէր Արփողամ աղան և ահա կազմ՝ որ արդէն հատած ըլլալով տկար լուս մը կուտար՝ կը մարի և մութի մէջ կը ձգէ հիւրը:

— Բայց քաշվելու բան չէ աս, կը շարունակէ խոշոր մարդը, կամ ուրիշ տեղ մը երթալունէ ևս կամ ակինը կանչելով պանի մը խօսք ըսելու է: Ես իմաց քաղաքիս մէջ երկու սպասաւոր տնիկոր գէմս բարեւ կը բռնին, ուեղանը կանուխ կը պատրաստէին և իմ գործերս կը տեսնէին. սպասաւորներով վարդը ված մարդ մը ինչու ալսանեղութիւնն քաշէ հիմայ:

— Աս ինչ է, կազմ մարմած է . . . հարցուց Տիկինը սենեակին գուռը բանալով:

— Այս, մարած է, պատասխանեց Արփողամ աղան զավելով իւր զգացած նեղութիւնն որ աւելնալու վրայ էր:

— Դուն հանգիստ եղիր, Արփողամ աղա, ալդ բաները նախիլը մեր գործն է:

Այս բայց առանձին եմ, և սկզբե-
ալու կարողաթիւնը չունիմ։ Առաջ սիլու այ-
ս Ես ինչ ըստ քեզի, մոգուն պարտիւմի
հատցուներ, ամեն բան ինձին ձգէ, ուստի կը հո-
գամաժամանակ ամուսնու մասին ամուսնու մասին

Տիկինը շուտ։ մը դրացուհւոյն տունը վա-
նգեց և անող կազմ բերելիս լուսաւորեց Աբի-
սողոմ աղախն խոսցը։ Այս աշխ և այրու-
թուն և պահ պահութ չեն ունի զաքա իս

Այս պատճենը մասնաւութեան վրայի կէս ժամ չանցաւ և Արքայում աղալին ներկայացաւ նմաներ, աղջականաւորի ալ չէր նմաներ, արհեստաւորի ալ չէր նմաներ, և վերջապէս անանլ բանի մը կը նմանէր որուն նմանը չկայ: Հազիւ երեսուն երկու տարեկան կը թուէր: Կապուտ աշերով գեղին մագերով զարդարված ըլլալով ունէր նաև երկու մատ մօրուք որ մալրաքաղաքիս մէջ կամ սգոյ նշան է և կամ չքաւորութեան: Հագուստներն այնքան հին էին որ հնախոլոգները զանդնք գնելու համար մեծաքանակ գումար մը կուտալին: Սակայն եթէ հագուստի մասին վա-

Հայ Ովկէասի մարդը, լիմարանոցէն վա-
խած լիմէնդէթէ թէ լիմարանոցէն թայու լիմառէ

— Հայ ազգն, շարունակեց երիտասարդը ձայնը քիչ մը իջեցնելով, այսօր այնպիսի հանդէս մը կը կատարէ որ մեր հայրենեաց ամեն նէն քաջ դիւցաղնին նույիրված է . . . : —

Միտքը բնչէ եղբայր . քանիւով իսկ
կարժամանակ մը ուրիշաւարը լրաց
սոյ դէմ կը կոռուէր, տգիտութիւնը գիտու-
թեան դէմ, անցեալն ապառնիխն դէմ, հրաշ
մայականը սահմանականին դէմ, սուրը գրիչի
դէմ, ատելութիւնը սիրուդէմ, կրակը ջուրին
դէմ, միսը բանջարեղէնին դէմ սիսկ հիմայ
անցան այն ժամանակները. անոնք անցեալ
են մենք ապառնի, անոնք խաւար են մենք
լրս, անոնք տղիտ են մենք գիտուն, անոնք
սուր են մենք գրիչ, անոնք ատելութիւն են
մենք սէր, անոնք կրակ են մենք ջուր, անոնք
միս են մենք բանջարեղէն, անոնք վարունգ
են մենք խնձոր, անոնք փուշ են մենք վարդ.
անցան անցան այն գարերը ուր մարդկաւթիւ-
նը տգիտութեան օրորոցին մէջ մէջ մը աս
դին մէջ մը անգին կերթար կուգար . . .

Միտքդ ինչ է եղբարս, ես քեզի ըան
մը չըրի, ինչ կուզեա ինձմէ, գնաա քեզի ըար-
կացնողին զըռուցէ այդ խօսքելը . . .

Սլո՛, մարդկութիւնը կը չարչարվէր,
կը նախատվէր անգութիւնսաւորներու ձեռ-
քէն և չէր գիտեր որու երթալ կորու բո-
ղոքել:

— Տէ՛ր ողորմեա . . . Տէ՛ր ողսրմեա, ըստ
ինքնիրեն Արխողոմ աղա. քաշելիք ունինք
եղեր . . . ես կրնամ Հիմայ զինքը սեղանէն
վար առնել բայց կը վախնամ որ ծոցէն ատր-
ճանակ մը կը հանէ և կը զալոնէ ինձի, վասն
զի խիստ բարկութեամբ կը իսօսի:

— Իսկ երբ գիտութիւնն եղաւ, շարու-
նակեց ատենաբանը, և վանեց տղիտութիւնն
ինչպէս լոյսն՝ խաւարը, սէրն՝ ատելութիւնը,
գրիչն՝ սուրը, ապագայն՝ անցեալը, այն ատեն,
ահ, այն ատեն. . . , այն այն ատեն, այն, կը-
սեմ, այն ատեն միայն հասկցվեցաւ որ մար-
դկութիւն, տղզ և հայրենիք բառերը բառա-
բանները լեցնելու համար շինված բաներ չէին,
այլ ամեն մարդու մտքին մէջ, սրտին մէջ,
Հոգւոյն մէջ երկաթեալ տառերով և անջինջ
կերարով դրոշմվելու բառեր էին . . .

— Եղբայր, կաղաչեմ, վար իջիր և այն-
պէս գրուցէ ցաւդ . . .

Աստենաբանը կախած տեղը այնպէս կը
դողար որ Աքիսողոմ աղալին սիրտը կը հատ-
նէր թէ կազը գետինը պիտի ինար: միլութիւն
Ուստի չուզելով այլ ևս համբերել պօռաց
ինքնակոչ ատենաբանին երեսն ի վերասխան զի՞
— Վար իջիր սըկէ: զի՞ յանիք յէջ մ օջա?
— Կաղաչեմ, մի սաստեր զիս: յագոր
— Վար իջիր ապա թէ զի՞ յանիք յէջ
— Մի կոտրեր իմ սիրտս որդի պագին հա-
մար կը բարախէ: յանիք յանիք ու . . . զի՞
— Ինչ բաշիք որ ունիս եկուր քովս մար-
դուակէս նստէ և ըսէ, հոն տեղուանքը ել-
նել բնչ պիտի ըլլաի: յանիք յանիք անձու զի՞
— Կաղաչեմ, թնդ տուր վերջացնեմ, ահ,
չես գիտեր թէ որչափ կը յուզվիմ երբ ճառ
կարգամ: յանիք յանիք յանիք յանիք
— Վար իջիր:
Աստենաբանը բեմէն կիշնայ և կերթալ,
աժոռի մը վրալ կը նստի: յանիք յանիք
— Հիմա զրուցէ ինձի, միտքդ բնչ է,
կըսէ Աքիսողոմ աղա բարկութեամբ: յանիք յանիք
— Կաղաչեմ, մի բարկանար: յանիք յանիք
— Ինչ կուզես, զրուցէ, շուտ, հիմալ:
— Բարկութեամբ մի վարվիր հետս, սոտք
պագնեմ, սիրտս լեցված է, հիմա կսկսիմ լալ:
Եւ ատենաբանը կսկսի լալ:

— Լալու բնչ պալ, եղբայրս! յանիք յանիք
— Ճառագիտ կը վափաքի գրականութեամբ
ազգին ճառալիել բայց այսազդը յանիք յանիք
բախտութեամբ կը վարվի իւր կը պատներուն
դէմ: յանիք յանիք յանիք յանիք յանիք
— Ատոր մէջ ես բնչ յանցանք ունիմ:
— Գուշ յանցանք չունիք և թերես իրա-
ւունք ունիք: ուսանաւորներ ունիմ գրած
Հայրենիքի վրայ, սքանչելի կտորներ, պատու-
ական տողեր, որոնց մէջ երեակայութիւնը,
աւիւնը, խանդն, հուրն ու բոցը սաւառնաթե
կը սլանան:
— Նաև աղէկ, ատոր համար լալու է:
— Մեր ազգն անոնց յարդն ու պատիւը
չըճանչնար, զանոնք տղայական բաներ կը
կարծէ և թող կուտայ որ զանոնք գրողը անօ-
ժի մնալ: յանիք յանիք յանիք յանիք
— Ես բնչ ընեմ: յանիք յանիք յանիք
— Կաղաչեմ, քաղցրութեամբ վարվէ
Հետս: յանիք յանիք յանիք յանիք
— Ինչ ըրած ունիմ քեզի: յանիք յանիք
— Զեզի պիտի աղաչէի որ, յանիք յանիք
— Ինչ, շնւտ ըսէ . . . յանիք յանիք
— Մի պօռար, երեսս ի վար, հոգիդ սի-
րես, հիմալ կսկսիմ լալ . . .
— Նորէն սկսաւ լալ գրագէտը: յանիք յանիք
—

— Տէր Ասքուած, ագունչ համբերութիւն
տիւր ինձի, ըստ Արքասպոմ աղանձն մէկուսի:
— Վաս—Խնդիրքսսարէր որ կուզէի տակել տաք
քիչ մը առաջ կարդացած ճառանու ճշուախյ

— Գնա տպել տուր, քու ձեռքէդ բռնող
կահնիմաս զմաբնա չմ ու զնի զոս. || —
— ալլի առ Պիտի խնդրէի ձեր Մեծապատութե-
նէն որ նփակցը մթեան ստակը գուք տալիք:
— առանու ինչնուաս. ինչ պատճառ կայգ որդիքու-
ճառիդի համար եմ զըամ տամ: Լավաճաբանէ
որ նմէկը սիրեն շահուան համար գիրք տպէ և և
ծախքն Արքողոմը տալ . . . : աանյա ըլ

— Կը խնդրեմ, սիրտս արդէն խոցված է,
դրւքալ նոր վերք մը մի բանաք հնու: —
— ինչնու վերք պիտի քանամ եղեր, գնա
բանը եղայր, փորձանքոեղար գլխուսէ ծայր

— Գիտէք որքան ծանը է գրազէտի մը

ասանկ խօսքեր լսելը . . . ամեն չմ ու

միստ Զեմոգիտեր, և գիտնալ չեմ ու զեր:

— Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկի
է, ամենաթեթեւ խօսքէ ամընկը պիտառվի:
Այս նիւթին վրայ ոտանաւոր մը գրած ունիմ,
կարդամ. մտիկ ըրէք: այս ունչ չմ ու

միմ: . . . այս նիսիով յանձ անձ

— Կաղաչեմ, ստանաւորիտի հետ խստու-

թեամբ մի վտրվիթ, ալն դտանաւորին համար
զոր դուք չէք ուզեր մտիկ ընել երկու ամիսն
աշխանած եմ ես. ակուրը անորի նախատվիլը
տեսնեմ՝ արժանապատուութիւնս կը վիրառութ-
վի: Կաղաչեմ, տտանագորին համար գէշ մի
զրծւցէք. առ կը ախնդրէմ, իմթոլը տուէք ինձ
կարդաշաղան յանգամ, մըլը. մուխ ստութիւն նո
վոյի երանաւոր մտիկ ընելու չեկայ
հոս:

— Նատ լաւ: Առզերգութիւն մը գրած
եմ, անոր վրայէն անցնինք: : ա. || —

— Չեմ ուզեր. ես անօթի եմ հիմա կե-
րակուր պիտի ուտիմ: մինս վր սկսյի —

— Նատ լաւ: Ուտելիքի վրայ ատենարա-
նութիւնն մը ընեմ: ասայ ասա —

— Փամանսկ չունիմ մտիկ ընելու: մորա
կոյանակաղաչեմ, զալորի խօսքը որուի անգամ
մի ըսեր, ատկէ աւելի ծանը խօսք չկայ հետ
զինակի մը համար ձորսիւր միկ նաշխատասի-
րութիւնն ուրիշի կարգալու փափաք կը լայ-
տնէսակը խնդրէմ, բարձրապատիւ Տէր, քաղ-
ցրութեանը վարվեցէք հեղինակներու հետ:

— զամանակ վրայ նստեցունեմ քեզիրը սձա
արագ Ոտքդ պագնեմ, մի ծաղը զիգ ինձ
չու ձեր գլխուն վրայ նստեցունէք: զմ միզ
մանակ իլլուս վրայ նստեցունեմ քեզիրը սձա

— Ի՞նչ կարծեցիք հապա, և երկու ամիս
ավետի սպասեմ որ մուսաս գալ և ներշնչէ ին-
ձի որպէս զի գրեմ առանց լմուսալի ոտանա-
ւոր չգրվիր: Են դուամաս գայթափափ յի
— Եթէ ազգ մծւսայն գալոք չըլլալ . . .
— Անպատճառ կօւգալ: Պրայ. —
— Զկրնար ըլլալ որ նամակ մը գրես և
ազաքես իրեն որ ջուտ մը գալ և գուն ալ
երկու ամիս չապասեն: Առանց գայլ այս
— Անիկացին քննիրեն կուգալ նամակի
ալէտք չունի, մեծապատիւ Տէրասոյք —
— Ուր կը նստի, բաշատ հեմուն է:
— Այս, շատ հեռու է, բայց կուգալ:
— Ցամաքէն թի ձովին այս մը
— Զէ, մեծապատիւ Տէր, չէրաւ
— Ով է զուրեմն ասգետնին տակը ան-
ցնելու մարդք . . . ուսկից պիտի գալ . . . ըսէ
որ ճանբայ մը մամտանք բերել տանք: Այս:
եթէ մէկ երկու ոսկի տանք՝ այս շաբաթ կուգալ:
— Այս, երկու ոսկի տալուղ պէս գործը
կը դիւրանալ, և մուսայս քայլ շաբաթ վագելով
կուգալ, պատասխանեց անմուսալ բանաստեղ-
ծը, ոսկի բառը լսելուն պէս: —
— Գրէ ուրեմն իրեն, իմ կողմէս ալ յա-
տուկ բարեներ ըրէ, և ըսէ որ Աբիսողոմ աղան
քեզ տեսնել կուգէ: զաւեր ամ. —

զաւեր Գլխում վրայ: Մնալք բարեաւ Տէր,
շնորհակալ եմ ձեզմէ. ծառայ եմ ձեր մեծա-
պատուռ միեւնը, և կաղացեմ որս ընդունիքու:
յի զաւ Ոչ, ըստակ Աբիսողոմ աղան բարկու-
թեամբ, ալ երկար ըրիր, ահա ինչ որս ըսիր
ընդունեցի, և նեռ քինչ ինչ կուզեսոր արնդու-
նիմ. յաս յայի յաման եւ տեխօւա զաւ մամայուի
յաւ Խորին վարդանակ Հաւասոնիքը, Տէր, և
որով մնամ ձեր մեծապատուռ միեւն ամենա-
խոնարհ ծառայ: յուրի ոչի մինար ու մզուսու
յի և . . . Եատ աղէկի: յուն յմաց մրասու մարք
. . . Մեկնեցաւ բանստեղծն, երկուս ոսկիով
բերել տալ իստանալով մուսայն զորչնեանք
աւելի աժան գնով բերել կուտան: Այս մատիք
մօրականն հիւսնի մօրականէն զամաւելի չէ
ալժմ: : արտ նորայի Ա
Աբիսողոմ աղան ինչպէս գիտեցին ընթեր-
ցողներն, կը մոռնար իւր անօթութիւնն ամեն
անգամ որ մէկն անոր խօսք կուտար անունը
լրագըի մէջ անցունելու և կամ եկեղեցւոյ մէջ
ծանուցում ընելու. ինչպէս նաև իւր բսակին
բերանը կը բանար և դրամով կը վարձատրէր
ամեն անոնք որ իրեն կը խստանալին անունն
ժաղովրդեան մէջ տարածելու: Փառասիբու-
թիւնն ալ տեսակ մը անօթութիւն է զոր-
գրամով կշտացունեն մարդերը: Լրագիրներու

մէջ գրվելու վայռամիրութիւնն՝ զոր ոմանք
մոլութիւն կը համարին. և ոմանք առաքի-
նութեան կազդը եւասել կը վափաքին, ու ևսոր
մեր ժողովրդեան ամեն դասերուն մէջ կը
գտնուի այսօր, տիրածէր նաև Արքսողում աղա-
լին վրայ ուրած բանասանեցինք մեկնելու ետքը
փոխանակ իւր անօթութեանը վրայ խօրհելու¹
սկսած ոտանաւորին վրայ միտք հոգնեցունել:
Արգեօք, հարցուց ինքնիրեն, ու դուա-
նաւորն ուղածին պէս պիտի ըլլա՞ ։ պայմար-
դուն մուսայն քանի մ'օրէն պիտի գալ. և եթէ
չգային սնոր տեղըն ուրիշամբ բերելու է
գաման Ալսոհարցումներն կուղղէր իրեն երբ տան
տիկինը ներս մտնելով ըստ. մասն ու մասն ու մասն
կերակուրը պատրաստէ, հրամմեցէք
Արքսողում աղա:

Դասկաց ժամը ըստ գիշեամբ ու այս ժամը ըստ
զարկած էր: անօր զույ զույ մժին ու նորուա
ջն բարձրած նոր ա ոյթ ուրուա չն զդրաց
միջնոց որդ մաս անը այս այս այս այս այս այս
Ե. զիյասազայի որ խունու և որուա որ յանդա
մէտ Ալն խուցնասորուն մէջ Արքսողում աղան
ասպաշտարանք քաշած էր, ունէր իւր դէմն
սենեակ մը որ խոհանոցի քովն էր և որ ճա-
շի յատկացված էր: Ասենեակը մտաւ Արք-

պողոմ աղան առաջնորդութեամբ տիկնոջ որ
սեղանը պատրաստած էր վերջապէս: իւր
Արքսողոմ աղան ճաշի սենեակը մտնելով
բարեւց Մանուկ աղան որ սեղանին շուրջը
աթոռներ շաբելու գրաղած էր: իւր Ս
- Ա Սանկ հրամմեցէք, Արքսողում աղա,
ըստ Մանուկ աղա սեղանին վերի կողմը ցոյց
տալով իւր հիւրին: կամ այս այս այս

— Հրամանքիդ նստեցէք, եսալ կը նստիմ,
պատրասխանեց հիւրն նստելով իրեն ցոյց տրված
տեղը:

— Ներեցէք կերակուրն ալսչափ ուշաց-
նելուս համար, ուրիշ իրիկուններ ձեր ու-
ղած ժամուն կրնաք ուտել. այս գիշեր քանի
մը պատճառներ թող չտուին որ սեղանն ժա-
մանակին պատրաստվէր. այս պատճառները
վերջը կը պատմեմ ձեզի: Ի՞նչպէս էք տես-
նենք, Արքսողում աղա, հանգիստ էք, հար-
ցուց Մանուկ աղան ճաշին աստիճանն իջե-
ցունելով:

— Շատ հանգիստ եմ:
— Շնորհակալ ենք, մեր բարեկամն ինչ
պէս է Տրապզոն:

— Աղէկ է, յատկապէս բարե ըրաւ ձեզի:
— Բերողը տանողն ողջ ըլլալ: Եթէ ձե-

զի գաւաթ մը օդի տռմ՞զ կը ու տնկէք ախոր-
ժակ կը բանալչ զի զ ծառապարան յանրան
խոյմուն Գմւաթս մը միայն կը խմեթէց Ա

Աղջու — Շատրվաւ զ համեմեցիք ու մակայ

Մանուկ աղան երկնցուց գաւաթն Աքի-
սողու աղային որ ի մի ումակ կը եց զայն, ալ-
սինքն օղին, գաւաթը չհասկնաք ու Ա անց

— Անուշ ըլլալ, Աքիսողու աղա ի յայսու
նիսու — Ենորհակալ եմ ք քայլանայ —

ճախրա — Զեր կենդանութեանը ը մմավսառան
— Ողջ եղէք:

— Մանուկ աղան օղին ջրով բարեխառ-
նելէն ետքը խմեց զայն ի չորս ումակ:

— Տիկինը մինչեւ որ կերակուրներն տաք-
ցունէ և բերէ՝ մենք կը նանք խօսի և ժա-
մանակ անցունել, այնպէս չէ Աքիսողու աղա:

— Ալո, պատասխանեց Հիւըն այնպիսի
եղանակաւ մը՝ որ կը հասկունէր թէ աւելի
լաւ էր նախ կերակուր ուտել և աստա խօսի:

— Մտիկ ըրէք ուրեմն այսօր մեր գլխուն
եկածները: Քանի մը շաբաթէ ի վեր թաղա-
կանի մը ընտրութեան ետեւ ինկած ենք:
Դուք հիմա է ձեր մտքէն պիտի ըսէք թէ՝ մարդ,
թաղականը քուկին ինչուդ ոլէտք: Անանկը
չէ, Աքիսողու աղա, աղջին գործը ես չնայիմ,
դուն չնայիս, ան չնայի, ով նայի ուրեմն.

ին չ' ւրմակէ ու քը լաշաս գէշ բանէ անոն
ամբեխամարթէ կրի վկը քաշվի և աղջին գոր-
ծերն ամալ երեսի վրայի կը մման: Իմա գիտցածս՝
ամեն մարդ ձեռքէն են կածին չափագին գոր-
ծերուն այլ աշխատելու Եւ Հատում ալ կը խմէք
Արքսողու աղջին. ախորժակ կը բանալ առասս
ու Ա առ Սովորութիւն աշունին մէկ գաւաթէն
աւելի խմելու: Ողջիս չին միլաթու զուազր
զուազր: Արքա գաւաթներն աղտիլուն, մանա-
ւանդիթէ, Թօրոյ օգն ալ կը վերցունէ: Ճամա-
ւուն Եւ Շատրվաւ անելու այլայ չին մածել
արքի երկու բարեկամներ մէրմէկ գաւաթի ևս
կը լմէցին իրարաւ կենդանութեանը, և Ամնուկ
աղան սկսաւ ատեխաբանութեան: ու նու նուրբի
Ալս առտու, ըստաւ, մեր թաղին աղ-
գային զբօսարանը գացած ժամանակ ձեզմէ
աղէկ չըլլալ: մեր լարեկամներն Աելքոն աղա-
լին հանդինեցայ: Ալս Մելքոն աղան նախ
հարթողիթէոս աղալին աղջիկն առած էր: Բար-
թողիմէրոս աղան ալ ժամանակաւ մատով կը
ցցունեն եղեր իբրև բարի մարդ, հիւրասէր
մարդ, աղջասէր և բարեպաշտ մարդ, և շու-
կալին մէջ շատ խանութներ ուներ՝ որդոցմէ
ապահն բաւական եկամուտ կառնէր: Քանի մը
տարիէն Մելքոն աղալին կինը մեռաւ և Մել-
քոն աղան համետագործ նիկողոսին տղկանը

Վետ կարգվեցաւ: Այսաւաղջին քանի մը եղ-
բայրներունի որոնց մին Ամբակրումնաղային
քնվագրագիրութիւն կընել: Ազնվա Ամբակրում
աղանձալատակ մը թուղթին թուղթին խաղա-
ղով հօթը շատասպակը կերաւելավերջէնամաւ-
սաստան փախաւ: Այսաւաղան Մարգարեակի-
կոպակին քըոջն թուան եղթօրորդին եր: Միւս
եղբայրը շուկակին մէջ ոսկերիչ է, քարձը հա-
սակավ, սիրուն մարդ մէտերը ու եղբայրը
ատենօք շատ պարապ պատրացաւ, ի խեղճու-
թեան մէջ ինկաւ, անօթութենիւս պիտի մեռ-
նէր, վերջէն թաղականանդավ ընտրվեցաւ
և մէկ երկու տարիէն սինքինքը ժողվեց: Զեր-
կնցնեմ խօսքն, Մելքոն աղանձ այդ նիկոզոս
աղալին աղջիկն առնելէն ետքը քանի մը տա-
րիներ շատ հանգիստ կեանք վարեց բայց վեր-
ջէն բախտը դարձաւ, ձախորդութիւն ձախոր-
դութեան վրայ եկաւ և ունեցածը չունեցա-
ծը բոլորնին կորմնցուց: Որ մը առնեմ զին-
քը հոսքերեմ և տեսնէք թէ ինչ բարի մարդ
է: Եղբայր մալ ունի որ վարպետ ժամագործ
մէ, ատենօք Պէօփոք Տէրէ կը նստէր, վերջը
քանի մը տարիներ և սկիւտար նստաւ, ետքէն
Քում քաբուն երթալով, Հոն ալ չկրցաւ նստիւ
և հիմայ չեմ գիտեր ուր կը նըստի: Բայց
շատ վարպետ ժամագործ է: Թորոս աղան որ

և ոչ մէկ ժամագործի կը այլն ձնէ իւր ժամա-
ցոցն: անոր կուտալ առորմաքը Այս թորոս
աղան կը աճան չնաք: Ու ուրիշ տեսակ մարդ է:
անոր Մէկ պատմութիւնը ընեմ աքեղի: Այս մտիկ
ըրէ ու տեսնես թէ աշխամը կիս զվայս աօանկ
մարդ կը գտնի եղեր որ անուն: այսու յեցան
— ներեմ աղութը, հարցուց տիկինը սեւ
նեակին դոնէն ներտերկնցնելով գլուխը: Ճանչ
Քիչ մը համբերէ, Տիկին, խօսքումնցոււ
նեմ վերջը բեր: Այնպէս Ս. թիսողոմ աղա, Չ
խօսք պէտք է եա: Եթէ մտիկ ընելու ժա-
մանակ չունիք: և գլուխնիդ կը ցաւցունեմ
կոր, ըստք: յա յանձնաւ միջարանա մը լուսն
Ամ ինչ խօսք է: և բաւան զա խոյս
Ս. թիսողոմ աղան չկրցաւ շարունակել իւր չ
խօսքը զոր ընդմիջեց Մանուկ աղան թորոս
աղալին պատմութեանն սկսելով: մը լուսն
պէտք է Այս թորոս աղան, շարունակեց, մուշ-
տակագործ մէ, ականջը խօսի, և իւր ընտառ
նիքովը հանգիստ կեանք մը կը վարէ: Իւր
տափնը պէտք եղած պարէնը, կարասիքն և
հանդերձեղէնն իւր ձեռքովը կառնէ և իւրմէ
զատ և ոչ մէկու մը վատահութիւն ունի,
ականջը խօսի: Մասկաճառէն միտ կառնէ,
տուն երթալուն պէս կը կշռէ զայն և անպատ-
ճառ քանի մը տրամ պակաս կը գտնէ միսը,

մսավաճառին կերթայլ հետո կախւի կը բռնվի
և քանի մը տրամապակաս տրված մինը կառու
նէ տունն կը սուրառնալու Ապանկամատարօրինակա
մարդ մէ ականջը խօսի Յօրն մը լայլ Թորոս
աղան, ականջը փօմիս ժամացոյցին վոշիները
մաքրել տալու համար ժամացոյցին մը կերտ
թայ և հետո սակարկութեանս սկզելով վեր-
ջապէս ապան և հինգուգահեկան կը հաւանի
տալ, այն ապայիմանալու որ Մամացոյցին իւրա-
ջեր մաքրէ ժամացոյցը, վամն զի Թորոս աղան
ականջը խօսի, ինչպէս թու մը ոչ մէկու մը
վատահութիւն ունենալով չէր ուզեր իւրամասն
մացուցն ժամագործին յանձնել և երթալ, վախու
նալով որ ժամացուցին մէջն ըան մը կը գող-
ցի, կամ ժամագործը դիմամբ կաւիչ ժա-
մացուցն մէծ ծախք մը ըանալով համար, ինչ-
պէս որ կը նեն շատ մը ժամագործներ երբ
քանի մը օր անգործ մնան: Ժամագործն իւր
պատանն ու մանարգանք կը համարի Թորոս
ազակին առաջարկութիւնն և կը բարկանայի
եթէ գունը ըլլայիր ժամագործին գտեղ չէր բարձրացնալու
բարկանար: Առաջ վիզ ու ու մէջ մէջ մէջ մէջ մէջ մէջ
Կը բարկանայի, պատասխանեց Աբիս
սովորմաղան որ խելքն իւռ միտքը ապուրի
զրկած ըլլալով բնաւականջ չէր կախեր Մա-
նուկ աղալին ըրած պատմութեանը:

— Թորոս ազան ականջը խօսի կը
կտրի ժամագործին բարկանալուն վրայ, և քա-
նի մը ծանր խօսքեր կը նէ իրեն որ ընելու
չէր. այնպէս չէ խօսդի մէն ո մէջն ըստայ
— Անպէս է, պատասխանեց դարձեալ
Աբիսողոմ ազան մէքնաբար, միշտ հաւանու-
թեան պատասխաններ տալով իրեն եզած հար-
ցումներուն, որպէս զի խօսքը չէրկարի և կե-
րակութը բերեն:

— Ժամագործը կը վոնտէ Թորոս աղան,
ականջը խօսի, Թորոս աղան ալ, ականջը խօ-
սի, խանութէն դուքս ելնել չուզեր, վրնտվիլն
իրեն պրզտիկութիւն համարելով. դուն ալ
ըլլամ չես ելլար այս ամսաւայթ պո՞ —

— Զեմ ելլար ա, պատասխանեց Աբիսո-
ղոմ աղան, որ չէր գիտեր թէ ուսկից չէր ել-
լար և ինչո՞ւ չէր ելլար. վասն զի, ինչպէս
ըսինք, Թորոս ազալին ըրած պատմութեան և
ոչ մէկ ըառը իւր ականջը մտած էր, միայն
հարցումներու կը պատասխանէր:

— Ծեծ կը ու քը կմկաի, ժամագործն ապ-
տակ մը կը զարնէ Թորոս աղալին, ականջը
խօսի, Թորոս, աղան, ականջը խօսի, կից մը
կուտագ ժամագործին, կարծեմ ով ալ ըլլար՝
Թորոս աղալին տեղը ուրիշ կերպով չպիտի
կը նար պատասխանէլ ժամագործին ապտակին:

Ոտքդ պագնեմ, Արիսողոմ աղա, ըսէ, այնպէս չէ: Լայնի մայստարկաց միջնորդանսե մյայլ այս Գուք ալ հով Վղոմագէսով կը շինէք Հարցուց մէկէն ի մէկ Արիսողոմ աղան: Խամաց Գոմագէսով:

— Ալն, ուրիշ տեղեր դոմագէսով կը շին եղեր:

— Փամացոցը: մազդոյ ցուախաղ մայստրոս աղալին ժամացոցը:

— Թորոս աղալին ժամացոցը: առ առ թորոս աղան ովէ: մասու զջմայստրոս մայստրոս:

— Ըրի, կատարեալ մտիկ ըրի, ըստ Արիսողոմ աղան, որ իւր դոմագէսի Հարցումովն Հաստատեց թէ միտքն ապուրի, ապուրէն դոմագէսի, դոմագէսէն Պօլսու մէջ բրինձի ապուրին ինչպէս շինվելուն գնացած էր, և բնաւոնկն չէր դրած Մանուկ աղալին ինօսքերուն:

— Արիսողոմ աղան շատ իրաւունք ունէր իւր տան տիրոջը երկարաձիգ ճառն մտիկ չըստ նելու, մանաւանդ անօթի փորով:

— Աշխարհիս վրայ կան մարդեր որք կը կարծեն թէ իրաւունք ունին մէկու մը քթէն բռնել և ժամերով անոր գլուխը ցաւցունել:

Աւրիշներ ալ կան որուիրենց կրօսքերը մտիկ ընել տալու համար մարդ կը վնատուեն և եթէ չգտնեն պատրաստ մեն ճոժարակամ օրական վարձ մ'ալ տալ, ոմանք ալ ամսականով աւմկնդիր կը վնատուեն Շամանգամ ինձի ալ պատահածուէ ալս փորձանքը, և սես մահկը ընել ձեւացումնելովն իմ գործիս վրայ խորհած եմ. հաւանութեան պատասխաններ տալով փնծի եղած հարցումներուն այս նպէս չէ պատասխանած եմ եթէ այն պէս չէ Հարցվէր ինչպէս արդու ալ թիւնն ալ այս է պատասխան տուածի եմ երբ արդարութիւնն ալ այս է Հարցումն ուղղվէր ինծի իրաւունքներուն եմ երբանի ըառած եմ ապէս գիւտ մի սասած եմ Հարցումն եղած է որպէս զի խօսքը կարճ կապիփ: Թժբախտութիւնն հոն գիւտ կլուածի ցաւցնովն երբեմն ախնալիս հարեւոր կը ունէ որուն պատասխանելը գժուար ցում մը կը ունէ որուն պատասխանելը գժուար կիրակոս աղան:

— Ինչ պատասխանելու է. գործին վրայ ընաւ տեղեկութիւն չունիս. որուն տալու ենաւ տեղեկութիւն չունիս. որուն տալու է բարեւունքը մանաւանդ գիտնալու է թէ իրաւունքը մանաւանդ գիտնալու է թէ

Վունքն որու պէտք էտալ որակէս զի գլուխդ
ցաւցունողին սիրալ ըը հաւիշ։ Ասորաալ ես
դիւին ճանբան դամած և և հետեւալ պա-
տաժանները կուտամ։ Վայն յան յան ձայն
ար ։ Գործն անուշութեամբ լմնցնելով է։
Ալո՞ բայց իրաւունքն որու քովն է։
Ի՞նչ օգուտ ո՞ւ զո գէշ մարդուն հետ
գլուխ չելնրիիր։ Անաստանայ մասին առ
ստուպ Ալո՞ բայց կաղաչեմ, մասէ բրկուքէն
որն իրաւունք ունի։ Յ մ ա վ ե թ ի ն ճ ա մ ա յ
ար ։ Ինչու կսիփաես որ լսեմ, եղբար, ե թ-
կու ան դամ ե ր կ ո ւ չ ո ր ըսի պէտյալտնի
է իրաւունքին նոր ըլլալը։ Եղայ ։ Յ Յ ա յ
ա յ ։ Շատերն այս պատասխաններովս գոհա-
ցուցած եմ. բայց ումանք ալ կանոր կարծես
զքեզ ոստիկանութեան պիտի լանձնեն եթէ
ըլսես թէ Մարկոսն իրաւունք ունի իսկ կի-
րակոսն անիրաւ է։ Ասոնց ալ ձեռքէն իտա-
սելու։ Համտր՝ ստիպուական գործ մունիմ լսե-
լով առեր քալեր եմ։ Խակ վերջերա տեսնելով
թէ այս ընթացքս կը քաջալերէ շատախօսնե-
րը։ քաղաքավարութիւնը մէկդիրդնելով օր
մը անոնցմէ մէկուն ըսի։ Ամարս ստիպու-
— Պարօն, զքեզ երկու ժամ մտիկ ընե-
լու համար երկու ոսկի կուզեմ, երկու ոսկիէն
լումալ մը սպակաս եթէ տալունիր։

Մարդը կէտ ոսկի տուաւ, իսկ ես չընդու-
նեցի և օձիք խալսեցի։ Ալո՞ օրերս կը լսեմ
որ այդ մարդը քառորդ ոսկիի երկու ունկնդիր
և մարդած է։ Երանի Մատիսին՝ որ իւր ուն-
կնդիրներուն ստակ տալու տեղ անոնցմէ ստակ
կառնէ։ Այսու բայց իսկ երկու ունկնդիրներուն
և, ինչպէտ յայտնի է, երբ դոմադէսի հարցա-
պինդումով զգալ տուտ ատենաբաննին թէ իւր
ճառն ընաւ մտիկ ըրած չէր իւր անքաղաքա-
վարութիւնը անմիջապէս դարձանելու համար
ըստականի ժայ իսկ ելքը մաս յա ԱՅ
— Կատարեալ մտիկ ըրի։
Աղէկ ըրաւ։ Յալտնի է որ գէշ ըրաւ,
եթէ ես իւր տեղն ըլլալի պարզապէս կըսէի
Մանուկ աղային։
Մանուկ աղա, ինձի նալէ եղալըրս. Եր-
բոր մէկը խօսիլ կոկիի խղճմտանքը մէկդի
դնելու չ։ Ութը ժամէ ի վեր անօթի եմեն-
և ընաւ պէտք չունիմ գիտնալ թէ Մարտի-
րոս աղան որուն տղան է թէ Գէորգ աղան
որու հալըն է, թէ ժամագործը Թորոս աղա-
լին աստակ հաներ է թէ Թորոս աղան ալ
ժամագործին կից տուեր է։
Այսպէս կը խօսէի բացէ ի բաց ոչ թէ
միայն ընկերութեան մը մէջ գլուխ ցաւցնո-

զին ալլ նոյն իսկ այն վարդապետներուն որ
շատ խօսելու նպատակաւ միայն չորս ժամ
քարոզ կուտան և կը վիբառարվին եթէ ժողով
վրեւն մէկը քարոզի ժամանակ եկեղեցին
դուրս ելնէ: Եւ արգէն ըսած եմ օր մը եպիսկ
կողոսի մը որ հինգ ժամ քարոզ խօսելէն ետքը
եկեղեցին դուրս ելած էր և խուցը կերթար:

Ո՞ր կերթար, արքազն հարցուցի: և
— Շատ քրտնած ըլլալով խուցս պիտի
երթամ և լաթ պիտի փոխեմ: այս մոտ
դուք ո՞ւր կերթար հարցուց ինձի: ու
— Ես ալ տուն կերթամ լաթ փոխելու
համար, պատասխանեցի իրեն: մզասամ —

Եւ այն օրէն ի վեր եալիսկոպոսն կարճ
կը խօսի քարոզին մէջ: մը մաս ու մը միա
Սբիսողոմ աղան չունեցաւ ալա համար Ս
ձակութիւնը և խթանու տուաւ Մանուկ աղա-
մին որ շարունակէ իւր ճառը գոմադէսական
հարցման պատասխանելէն ետքը: ու այս մը
մէջ:

— Գոմադէսը հոս կը գործածէնք ապու-
րի մէջ, բեկա վի մէջ, և ուրիշ մաեդէն քառ
նի մը կերակուրներու մէջ, բայց բնաւ երբէք ք
ժամացոցի մէջ: ու այս մը մաս բարու միլ

— Ծնորհակալ եմ ապարի մէջ կը գործա-
ծածի ըսել է, ես ալ պատուինակ կը վի-
փաքէի: սեւոյ ջմն ցն մաս ելուցմին միամին

Սալուքը դոմադէսիվ կը սիրէք թէ ոչ:
— Գոմադէսով կը սիրեթէրոք գչու մուզ
— Շատ աղէկա Դահնանք հիմալ մեր
մխօսքինսա: Արուը գմնացինք ու այս մաս
աղային վրայ էր, ածարօիկնակ մարդ զմէ աս
Թղրոն աղան տկանիլ մխօսի, ուշատ պատմու-
թիւններ ունի, ուրիշ գիշեր մալ դանոնք կը
պատմեմ և ժամանակ կանցունենք: Երկար
չընենք առաջ առաջ հանդիպեցալ Մելքոն աղա-
յին . . . այսրած և առնօց դու միասի
զմէջը այսրի որի տաք տաք ուտենք, ըստ
տիկինը ներս նամնելով ելապուրը գերելով: Հ
յոցի Ալոն, Ալոն, ուտենք, վասն զի՞ շատ անօ-
թիւնմալ ըմաւ Սբիսողոմ աղանքա: Այդ թիւն
— Հրամմեցէք . . . զարք մայն ելուզ
— Ծնորհակալ եմ ըմաւ Սբիսողոմ աղան
զեղդալը բերանը տանելու չմնաց մէկէն ի
մէկ վեր ցատկեց: մաս գլուխի մասոց մէջ
— Կարծեմ թէ շատ տաք էր, ներեցէք,

— Սբիսողոմ աղան, ըստ տիկինը: ասած
— արած միշ մը ջուր առ բերանդ Սբիսողոմ
աղան, աւելցուց Մանուկ աղան: զնոր միմայ
ամ ցւ Վնաս չունի, վնաս չունի, այս միա

— Տիկին ինչու համար ուշադրութիւն
չէք ըներ կերակուրներուց տաք թէեանը կամ
պաղութեանը ըստ էրիկն կողջ:

Ա՛յս գիշեր մեր պակասութիւններուն աչք դոցելու է Արքասողոմ աղաւուն զմեն վնաս չօտնի, բան մը չէ: —
ապա (6) — Ապուրը մինչև որ պաղի՝ ալս օրուան գեղքը պատմեմ գանէ ըստ Մանուկ աղան: —
Մանուկ աղա, Արքասողոմ աղային գլուխը մի ցաւցուներ ալս գիշեր, թերւեռ չափի խորժիքի: զամանակ անցունելու համար պիտի խօսէի որ զբունու և չնեղվի: . . . մի
առաջ — Ուրիշ գիշերուանս թողարակ ալս գիշեր հագնած հագնած կընալ քեզի մտիկ ընել: զամանակ կարծեմ թէ Արքասողոմ աղան սիրով մտիկ կընէ ազգային կարծերը և գնաւ ձանձրութիւն չզգար: . . . զամանակ —
Այս, սիրով մտիկ կընեմ, պատասխանեց հիւրը, բայց Տիկինին ըստածին պէս վայը գիշերուան թողունք, վասն զի ալսօր շատ հոգնածէն: զամանակ —
— Նատ լաւ, շատ լաւ. ինչպէս որ կուզէք անպէս ըլլայ. բայց մեր թաղին թաղականին գործը շատ գուարճալի է: Մելքան աղան եթէ հոս ըլլար և պատմէր՝ խնդալէն կը ճամէինք: զամանակ զաման միջի՞ւն —
Ապուրը պաղեցակ, հրամմեցէք, ըստ Տիկինը:

Արքիսողոմ աղան այսայ հրամէրն աղմնելուն պէս նդաղնով աղութիւն վրայ լարձակեցաւ: զաման 0ղի մ' ալ կը ախմէք, Արքիսողոմ աղմնելուն Տնորհակալէն, չեմ ուզեր: . . .
— Տիկին, յս Արքիսողոմ աղային գինի լեցուր: մ զաման միջամտուայ ու Սանհեկ աղա, ալս գիշեր այլանդակ խօսքեր կընես, ապարի վրայ գինի կը խմվի: այս ինչու չկընի մի աղամինք պիտի, տեսնենք պիտի հաւանի մեր գինինին: յս պիտի զաման միջամտուայ ու Տիկինը դուրս ելաւ և խաշած մին բերելով սեղանին վրայ դըաւ: մ զաման միջամտուր Արքիսողոմ աղան այնպիսի ախորժակով մը կուտէր որ մսի կտորները առանց ծամելու կը կլլէր: սաման միջամտուայ այս նոյսով: Պառք պէտք Աստուած, ալս գիշեր ալ կը աղացանք, ըստ Արքիսողոմ աղան վորն քաշանայի մը պէտական եցնելէն ետքը, եւ երեսը խաչակն քելով ու ցած ձայնով հաջը ըմեր ն ըսելով սեղանէն ելաւ և լուացվելով համար ջուր վնասեց: բայց այս միջամտուայ ապա միջամտուր կը լուացվէք, հարցուց տիկինը հիւրին: ա զաման միջամտուր Եթէ ջուր ըլլար . . . յ մասի միջամտուր Մենք սովորութիւն չունինք, բայց ձեզի քիչ մը ջուր բերեմ և լուացվեցէք:

Տիկինը ճարագով երկրորդ յարկը - սենեակ
մը առաջնորդեց Հիւրնաւալիար, իցա՞:

Այս պառկելու սենեակն փոքր էր և պնոր
ճիշդ չափը տուած կը լանք եթէ լսենք որ
Արեսկղոմ ազգային հասակին երկայնութիւնն
ունէր: Անկողինը շինված էր այն միակ պա-
տուհանին առջև որ փողոցի վրայ բացուած
էր: Աթու մը, քառակուսի պղաթի մեղան մը,
փոքրիկ հայելի մը, ջուրի շիշ մը և գաւաթ-
մը, ուսնար մը, զրձին մը այս սենեակին կա-
րասիքը կը կազմէին: Անզութ ին ոս ուսուած

Սըխողոմ աղա սենեակէն ներս մանեց
լուն պէս ձեռները բացաւ գետ նորէն փառք
տուաւ Աստուծոյ որ վերջապէս խալսեցաւ փոր-
ձանքներէն աւ տուանձին մնաց: Բայտէն ար-
ձակվադ մը չէր կարող ճաւելի ուրախութիւն
զգալ: Փառաբանութիւնն աւարտելուն պէս
հանվեցաւ և ինքզինքն անկողնոյ մէջ նետեց:
Ասկէց ետքը ինելիքս գիտեմ, ըստ
անկողնոյ մէջ, և ոչ մէկու հետ ալիսի տես-
նուիմ, վասն զի ես ալս ալօլսեցիները շատ
չափեցի, ասոնք կամ դրամդա առնելու կը նա-
յինկոր կամ երկու ժամ գլուխոդ ցաւցունելու:

Ֆնչուաս մլէտք իմին եւ եկած եմ : Հոսկին
մարնելու և երթալու . որուն աղջիկն որ սի-
դեմ՝ կուզեմ, եթէ տան՝ կառնեմ, գործու կեր-
ժամ. և եթէ չտան . . . եթէ չտան . . . բայց
ինչու չտան . . . ինձմեւ աղէկին պիտի տան, . . .
եթէ վաղը սա լրակիքն իմ անունս այ փա-
ռաւորապէս գրէ՝ այն ատեն շատերն պիտի
աղաչեն ինձի որ իրենց աղջիկն առնեմ. . .
մէկին աւելին ինչ պիտի ընեմ. . . անոնց մէ-
ջէն պարկեշտ աղջիկ մը կը զատեմ. . . խօս-
կապը կընեմ . . . նշան կուտամ . . . կը կարգ-
վիմ . . . պահայ շաբախ մասն զժայցար պար-
Ալս որոշումները տալով կը քնանալ Արէ-
սողոմ աղան: այսօք պատասխ քա նմիշաց-
մարս նար միջադշը նայ մայմանակուած-
ուի գո քա մարս նորացը: միջմանաւ մայմ-
անաւ ոգիլապը ցը շնչառ դիմանեն յոդի պար-
մայմանաւ ոգիլաք: յանձնեցաւ ու առաջ արձի-
ղութ Արիսողոմ աղան աղումը քուն մը քաշեց
նոյն գիշերը, վասն զի շատ հոդնած էր, և
թերևս հետեւեալ օրն ալ չէր բանար աչերն
եթէ փողոցի վաճառտկաններն առաւտուն
իրենց ահարկու ձայներովն շառովէին անոր
քունը, մահուան այդ կրարոնն, որ ոչ միայն
հոգնած մարդերու հանգստարանն է ալ շատ
մշտնցենական ցաւերու առժամանակեալ դար-

մանսէ։ Արանիւանոնց մը կը սքնանանք և
ուշ կարթննան կամ բնաւչեն արթննար վասն
զի ամսնք բնաւչեն զգար կամ գոնէ քիչ
կղզան այն ցաւերն որք հալ ուստաշ կընեն
մարդու Քայլ Պօլսոյ մէջ քնանալու պատու-
թիւնս ալ չկալ ։ գիշերները պահապաններն
ախքան ուժով գետին կը զարմեն իրենց փալ-
տերն առաւծուն փողոցի վաճառականներն
ախքան բարձր ձայնով կեղանակեն իրենց ամ-
րանքներն որքունն կը շուտրի կը մնալ թէ
որ կողմի փախչիւ Եթքավերջին դատարանին
որը Գաբրիէլ Հրեշտակապետը չը ջողի իւր փո-
ղովն սեռեալներն արթնցնել ես պիտի առա-
ջարկեմ որ այդ պաշտօնը Պօլսոյ փողոցի վա-
ճառականներուն կամ գիշերալին պահապան-
ներուն յանձնըին։ Արիսողոմ աղան ալ, որ փո-
ղոցի վրալ սենեակի մը մէջ կը պառկէր, ստիպ-
վեցաւ կանուխ արթննալ։ Աչերը բանալուն
պէս զանկողինեն ելաւ, ոնտուկը բացաւ և ճեր-
մակեղէնները փոխեց, իւտոյի լուացվեցաւ և
Համգվեցաւ։ յ դէ յա մյօ յանամ սմդին
մոտո Տանտիկինն որ իմացած էր հիւրին ելած
ըլլալն վեր ելաւ և ող գարգարուն սպենեակ մը
Հրամցընելով զգունոյ իմաց տուալութէ մէկն
կսպասէր վարը և զինքը տեսնել կուգէր։ յ դէ
թաղ Հրամմէ, ըստեցէր

մբյաստունատ հատ լաւ։ կաղաչեմ, ուրաէք իմնձի, խա-
մաւէնն կաթավ կը խմէք թէ առանց կաթիւ-
ցն վար կաթ կը խմեմ առանց խահպէի։
— կաթ բերեմ ուրեմն։ աւաստ լոզի
անքար Այն, կաթ բերէք բան նորություն
Տիկինը վար գնաց։
Տեսնենք մաս մարդք ըստ ինք-
նիքն խօշոր մարդք, թերևս աղջիկ ունի կար-
գելու և իմ Պօլսոյ գալստիմ անալով առաւո-
տուն կանուխ հետրս խօսելու եկած էր Քայլ
ես մինչև որ չամուգեմաղջկան ինչ քնու-
թեան տէր ըլլալը խօսքուչեմ տար, նախ ամեն
բան հասկնալու եմ, աղջիկը քննելու եմ, վեր-
ջէն հօրն հարցունելու եմ, վասըն զի իմ սի-
րելս բաւական չէ, պէտք է որ հայրս առ սի-
րէ իմ կինաւոչ թէ միայն Հայրս, այլ ամեն
մարդ հաւնելու է։ յ առ անոնց անոնց ծնն
— Բարեւ, վեմափայլ տէր, ընաւ երես-
նամեալ և վառվուն երիտասարդ մը սենեակ
մտնելով և արագաքայլ Արիսողոմ աղալին վա-
գելով անոր Ճեռները սղմելու համար։
Արիսողոմ աղա տեղէն ելաւ և Ճեռները
յանձնեց այդ երիտասարդին որ ուղածին պէս
սղմէ և թոթուէ զանոնք հազարու մէկ յար-
գանքներ մատուցանելով։ յ դիմանաւ յ դէ
— Նստեցէք, Արիսողոմ աղա, կաղաչեմ,

— չը կալերքոր սոմքէնէք, ըսպւռերիտասարդն
տիրոցը գարձնելով իրեն պահնը ըլված ձեռներն
և կոտրնտվելով ետաեն մղնաց թիկնաթոռի մը
վրայ նստաւ: : մնացաւ նմդնց ժխաւ —

Արիսողոմ աղանձնբազմոցին վրաց բազմեցաւ:

— Արդարին մեր սպարտքնէր էնէրէկ գալ
եւ ձեր գալուստը շնորհատոր բայց ուշիմա-
ցանքաձերագունայատոր համար յատկապէս ձեր
մներողութիւնը վկը նիսդրենք ըստաւերիտա-
սարդն ձեռներն իրարուգ շփելով: մնացն ու
մնան աւ Ալոր գալով սպակասութիւնն մը ըրած
չէք ըլլար որ ներողութիւնն ինդրէք: մաս
իս իս Զեր քաղաքավարութիւնն էլոր այն-
պէս իսուել կոտտալ ձեզի, բայց մենք մեր պա-
կասութիւնը միշտ վիճ ճանչնանք: Արդարին
մեծ պակասութիւն մէ մեր ըրածը, ձեզի պէս
երկելի մարդ մը մարտաքաղաքուգայ և պատ-
կեր հան մը անմիջապէս բարի եկարի չեր-
թայ, պակասութիւններու սրակասութիւնն է
որ և ոչ մէկ կերպով մը վրնայ պակասութիւնն
ըլլալէ գաղրիլ: մնացաւ արա նորսավիլ
ու մի Ամենեկին սպակասութիւնն մը չէ, եթէ
ըրնաւ չգալիք գարձեալ պակասութիւնն իմը
չէր համարվէր ինձի համար: առան դմբք մաք
ու մաքարան Սատր վեհանձն էք: գլուխամ —

— Ամենեկին վեհանձն չեմ: յիշաւ լու զան
— Թող այնպէս ըլլայ, ատոք համար հի-
մայ վիճաբանութեան մանելու հարկ չեմ տես-
ներ, ոմիան փնքզինքս ձեր տրամադրութեան
տակ, կը դընեմ և ձեր հրամաններուն կապա-
սեմ. եթէ կուզէք հոս քաշել տուէք, եթէ
կը փափաքիք մեր գրասենեակը պատուել հա-
ճեցէք և հոն հանենք, ինձի համար մի և
նոյն բանն է, դուք ինչպէս մը կախարժիք՝ զ
անպէս ընելու պատրաստ եմ: բոյն ծնն գոր
մայստեր ինչպէս քաշել տանք և գիմ ակա-
ռաները աղէկ են: մայստեր յիմ արաց
թիտեմ մը ակռաները աղէկ են ինչո՞ւ
պէս նաև գուշակ ալ աղէկ եք. ես կը փափա-
քիմ ձեր լուսանկար պատկերը քաշել ան լու
ես մինչեւ հիմայ պատկերը բնաւ քա-
շել առաջ չունիմ և քաջեւ ստալու հալի մ'ալ
չեմ տեսներ, վասն գիւ ամեն օր հայելի կը
նալիմ և ինքինքս կը տեսնեմ: այս
— Եթէ ձեր պատկերը մէկաւ մը լրկել
ուզէք հայելին կընաք վրկել Արիսողոմ պատ-
— Հայելին ինչու դրկեմ, ես կերթամ:

Նատաղէկ կը խօսիք, բայց ես մին-
չեապը ձեր պատկերը հանեմ չեմ կընաք հան-
գիստ ըլլալ. ինձի համար պատկերութիւն մէ
ձեր պատկերը չը հանելը, թող որ ձեզի հա-

մար ալ այնպէս է: մշտաշմի սգմանն Ա
— Ի՞նչուս այլոց սժրակա քո՞ւ —
— ամու Լսված բան է որ ձեզի պէս երևելի
մարդ մը Պօլիս գալ ու ալատկերը քաշել չտայ
աշխարհ արարատ ձեր վրայ ոլիտի խնդայ
նէք: գլուխ յաջագ սու գըրափ չեմ նմա
— Ինչուս յիշամ մասոյ դմ գցատիափ դը
— Պատճառը յալտնի է: մեծ մարդերը
ընտկանաթոր յմեծ ըարեկամներ կունենան,
դուք մեծ մարդ մէք և այսօր կամ վաղը պիտ
տիսկմիք մեծ մարդերու այցելութիւններն
ընդունիլ: Սանցմէ շատերն իրենց պատկեր-
ներէն մէկմէկ հատ պիտի նուիրեն ձեզի, և
դուք ալ պիտի ստիպիք ձերինէն մէկմէկ հատ
տալ անոնց: ազ պայման դարձաւոյ դժ նդզ
— Եւ եթէ չտամ կը խնդանիմ վրայ:
— Խնդանն ալ ինծաք է, նմկերութիւննե-
րու մէջ մատի վրայ կառնեն քեզի մնան նէզ
— Զարմանալի բան, ոգամք ոչ և նդաս
— Լսված բան է որ ձեզի պէս ազնուա-
կան մը պատկերը հանել չտայ մեծ պմօթէ: Ի՞նչ
— Մէծ ամօթէ: այս միջնամ —
— Ալու շատ մեծ ամօթէ, անվարտի
պարտիւն այնքան ամօթ չէ որքան իրեն պատա-
կերն չունենալը: բա դանու մնայ յայլոց ոսիք
— Ես չի գիտեր: մնայ ոչ պայման դժ

— Քաղաքակրթութիւնը և լուսաւորու-
թիւնը պարտք կը դնենամեր ամենուս վրայ
որումեր պատկերներն ունենանք մնան զի զիմ
— Լրագիրները պիտի գրեն որ Արխանք
աղան իւր պատկերը քաշել առւածէ: զի զի
— Լրագիրներու վերաբերեալ ինդիր մը
չեաս առ նու ա գլուխուած դու նձարակ
— Հսել է թէ Եկեղեցիներու մէջ գծա-
նուցում ալ չպիտի ըլլայ: մդմիջը —
— Ծանուցումի ինչ Հարկակայ, Արիսու
զոմ պաղա, ոկը ծաղրէք զիս և յու Յո
— Ֆաղրէլ ատոր շատ դէմ եմ ես, գուա
ինչ իրաւունք ունիմ ուրիշ մը ծաղրէլու: —
— Մի բարկանաք . . . մը բարկանաք
— Զէ, կը բարկանամ, ես բնաւորութիւն
մը ունիմ որ ամեն բան շիտակ կուզեմ:
— Շատ լաւ. ինչ դիքով հանել կուզեք
ձեր պատկերը: զի զի նիւթիւն չինչ
— Միտք չունիմ պատկերս քաշել չտա-
լու, վասն զիսանօգուտ բան մը կերեալ ինձէ:
— Ի՞նչ կըսէք, ուստից աւելի օգտակար
ինչ կայ. եթէ ձեր բարեկամներէն մէկուն
այցելութիւն մը տալ ուզեք և ժամանակ չու-
նենաք՝ ձեր մէկ պատկերը կը զրկէք կը լմնայ
կերթակ: Եթէ կարգուած էք՝ ձեր ամուսնոյն
կը զրկէք որ ձեր բացակարութեանն պատեն

անոր վրայ նայելով կարօտը կառնէ . . . եթէ
ամուսնացած չէք շատ աղջինէր ձեր պատը
կերը կը տեսնեն եւ ձեր ով ըլլալը կը հասր
կնան, որով ընկերութիւններու մէջ ձեր անու-
նը կը խօսիի: Առւգանդիկար պատկեր մը արա-
օրուան օրս հացէն աւելի պէտք մարդուս.
կաղացեմ որ համոզուիք և ժամ առաջ երբ
թանք ձեր պատկերը քաշենք:

— Աղջիկներն ինչպէս եւ ուր պիտի տեսա-
նեն իմ պատկերս . . . մի վերաբերութ:

— Զէ որ . . . ձեր բարեկամներուն պիտի
տաք, անոնք ալ իրենց տունը պատկերներու-
յառուկ գիրքի մը մէջ պիտի անցունեն և ամե-
նուն պիտի ցուցնեն: զամափայ չ' ։

— Յունչ կուզէք որ ըլլալու ու միշտու կը
մշշիք, ինչ խօսիք չ' ։ այ ուստ:

— Եթէ չիշշիմ ինչ կը կորսնցնեմ, հոգմ
եր իմին թէ զիս պիտի լիշեն, կուզեն լիշեն
կուզեն չիշեն, իս անանկ դարտակ քանիներու
ստակ չեմ տար և քու խօսքերուդալ չեմ հա-
ւատար: մշշմնութեայ դժկ ։ այ չ' ։

— Սահկայ պղտիկունուի մը թամէ: ուրիշու-
յան վաստակ մէջ իւ թն ովէ: իւն դժկ գաւճա-
մուստ Տէր, գիտէք որ արթի իսթ մը նի-
րաւորեցիք ծանրասիսայ դժկ զս գշչոյ ցի

— Ե՞ս վիրաւորեցի:

— Այն, գուք . . . սոյն ծառաւու

— Պատկերս քաշել չտալուս համար զըր-
պարտութեան սկսար . . . ես մինչև հիմա մէ-
կը վիրաւորած չեմ:

— Ալսօր զիս վիրաւորեցիք:

— Գնա սստիկանութեան իմաց տուր, պա-
րապ խօսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ:

— Ոստիկանութեան երթալու հարի չկալ.
կը խնդրեմ որ ձեր բերնէն ելած խօսքը հաշ-
տեցունէք ձեր քաղաքավարութեանը հետ:

— Ես կուռի մէջ չեմ մտներ, գնա դուն
հաշտեցուր եթէ կուր ընողներ կան:

Մանուկ աղան Աբիսողոմ աղային նախա-
ճաշը կը բերէ և եռոտանի սեղանի վրայ դնե-
լէն վերջը,

— Հրամմեցէք, ձեր կաթը խմեցէք, կըսէ:
Աբիսողոմ աղան աթոռ մը կառնէ, սե-
ղանին առջև կը նստի և կսկսի կաթը խմելու:

— Ի՞նչ որոշեցիք նայինք, Աբիսողոմ աղա-
լին պատկերը կէս մէջքէն պիտի քաշէք թէ
ոտքի վըրալ, կը հարցունէ Մանուկ աղան:

— Ոչ կէս մէջքէն ոչ ալ ոտքի վրալ, կը
պատասխանէ Աբիսողոմ աղան:

— Աթոռի մը վրալ նստած ամբողջ պի-
տի քաշէք:

— Ոչ: Համար աղջուացիք ո՞՛ւ
 — Պառկած պիտի հանէք: ո՞՛վ
 — Ոչ: Այսուց ուժուաց աղջուաց
 — Քովլնտիք: Համար աղջուաց աղջուաց
 — Ոչ: Համար աղջուացիք ո՞՛վ
 — Ի՞նչպէս որոշեցիք ուրեմն: ո՞՛վ
 — Որոշեցինք որ մեր պատկերը բնաւ
 քաշել չտանք:
 — Աս ըլլար. ատիկալ մեծ պզտիկու-
 թիւն է Արխողոմ աղա. Հիմա պզտիկներէն
 բռնէ մինչև մեծերը գնա, ամենն ալ տարին
 քանի մը անդամ սլատկերնին քաշել կուտան.
 Երկու ամսու տղախերն անդամ իրենցն ու-
 նին, միայն իրենց մօրը արգանդին մէջ գտնուող-
 ները չունին իրենց պատկերը. եթէ անոր ալ
 դիւրին մէկ ճամբան գտնեն՝ անոնցն ալ պի-
 տի հանեն:
 — Ես չկրցի համոզել Արխողոմ աղան
 որ կարծեց թէ զինքը խարելու համար եկած
 եմ հոս, ըստ պատկերհանը:
 — Զէ, չէ, մեր պատկերհանն անանկ
 մարդ չէ, աւելցուց Մանուկ աղան:
 — Ըսի թէ Արխողոմ աղալին պէս մեծ
 և երեւելի մարդ մը իրեն պատկերն անպատ-
 ճառ ունենալու է:
 — Այս, ունենալու է, և քանի մը տե-

սակ: Օրինակի համար. տասներկու հատ պզտիկ,
 տասներկու հատ միջին, տասներկու հատ մեծ,
 տասներկու հատ ոտքի վրալ, տասներկու հատ
 աթոռի մը վրալ բազմած, տասներկու հատ
 քովլնտին նստած, տասներկու հատ շիտակ
 նստած, տասներկու հատ ոտքի ոտքի վրալ
 դրած, տասներկու հատ ձեռք ձեռքի վրալ,
 տասներկու հատ գլուխը ձեռքին կոթնած,
 տասներկու հատ ձեռքը սեղանի մը վրալ դրած,
 տասներկու հատ պառկած, տասներկու հատ
 ձեռքը գաւազան բռնած, տասներկու հատ
 ինդումերես, տասներկու հատ տխուր գէմքով,
 տասներկու հատ ալ ոչ խնդումերես և ոչ
 տխուր գէմքով: Այս, Արխողոմ աղա, աս ըսած-
 ներէս հատ մը եթէ պակաս ըլլայ: Ձեր պա-
 տուոյն վնաս կուգայ:
 — Իրաւ կըսէք, հարցուց Արխողոմ աղա:
 — Սուտ խօսելու բնաւ պարտականու-
 թիւն չունիմ. եթէ ասոնք չունենաս՝ քու
 վրադ աղէկ աչքով չեն նայիր, բոլոր մեծ մար-
 դերն ասոնք ունին:
 — Մեծ մարդերն ունին. աղէկ դիտես:
 — Այս, ունին:
 — Պզտիկներն ալ ունին ըսիր հապա:
 — Պզտիկներն ալսչափ չունին, անոնք
 կամ երեք հատ և կամ շատ շատ կեց հատ

Հանել կուտան: Բնաւ մտքէս չէր անցներ որ պատկերին ալսափ կարեռութիւնսկը տրվի հոս: Այս կարեռութիւնը հիմայ միայն պատկերներուն կը տրվի, և որքան աղէկ քաշված ըլլան՝ այնքան աւելի կարեռութիւն կառնեն: Քանի որ ամեն մարդ իւրա պատկերն ունի, իմ մեծ մարդ ըլլալու ինչն պիտի հասկցվի. միայն մեծ մարդերը քաշել տալունէին որ այն տեսն... . Բայց մեծ մարդերունը ուրիշ տեսակ է, խոշոր գիրքով և փայլուն թուղթի վրայ կը հանեն: Զկրնար ըլլալ որ սպասաւորներս ալ առջևս բարե բռնած հանենք: Շատ աղէկ կըլլալ: Իրաւ կըսէք: Այս: Օրինակի համար ես ազարակներ ալ ունիմ, որոց մէջ շատ մը կովեր, ոչխարներ, ձիեր, սագեր, բագեր կան, անոնք ալ կարելի չէ պատկերին մէկ կողմը դնել: Ատոնք կարելի չէ, բայց սպասաւորներդ կընաս առնել, այնպէս չը պարոն Դերենիկ:

— Այս, այնպէս է, պատասխանեց պատկերհանը: Զկրնար ըլլալ որ, հարցուց նորին Աքիսողոմ աղան, սպատկերին տակը գրվի որ այս մարդն ագարակներ, ձիեր, կովեր, էշեր ունի: Այս գիրայ ըմանաւոր: Այս Ստ չգրվիր, կընայ գրվիլ բայց մինչեւ ալսօր առվորութիւն եղած չէ: Սակայն ինչ հարկուկալ զանոնք գրելու, արդէն ամեն մարդ շուտով կիմանալ: Գիու վրայ նստած կընանք հանել: Այս, սպատասխանեց Դերենիկը: Զին վազցունելով սակայն: Ատ գժուար է: Շատ լաւ, վազը կընայինք: Եթէ կուզէք՝ մեքենան հոս բերեմ վազը: Այս, այն, հոս բերէք, կըկնեց Մանուկ աղան, վասն զի չգալիք որ Աքիսողոմ աղան ձեր սեներակը գալ: Մեծ մարդերը միշտ իրենց տուներուն մէջ քաշել կուտան պատկերնին: Գլխուս վրայ, ըստ Դերենիկն և ձեռները շինել սկսելով ոտքի վրայ ելաւ և կոտը տվիլ սկսաւ այնպէս որ խօսք մը ըսել կուզէր և կը քաշէր:

Յալտնի է թէ ալն մարդն որ բան մը
ըսել կուզէ և կը քաշվի, անպատճառ ատակ
պիտի ուզէ:

— Վաղը մեքենան հոս բեր արսաւ Արքի-
սողոմ աղան:

— Նատ լաւ, պատասխանեց պատկերհա-
նը միշտ կոտրավելով և ձեռները շփելով:

— Վաղը մեքենան հոս բեր լսինք ա,
կը ըկնեց Արքողոմ աղան տեսնելով որ պատ-
կերհանը չերթար:

— Այս, Հասկցալ, մեքենան վաղը հոս
պիտի բերենք պատասխանեց նորէն Դերենիկը,
բայց սովորութիւն մը ունինք մենք որ . . .
ներեցէք սակայն:

— Ըսէք:

— Բայց կաղաքեմ, ծանր չգայ ձեզի:

— Ծանր չգար ինձի:

— Սովորութիւն մը ունինք որ եթէ մե-
քենան մէկու մը տունը տանիլ Հարկ ըլլայ՝
կանիսիկ գումար մը կառնենք . . . ոչ թէ վրս-
տահութիւն չունենալնուս համար այլ սովո-
րութիւն մը յարգելու համար:

— Ատ ի՞նչ գէշ սովորութիւն է . . .

— Արջապէս սովորութիւն մ'է:

— Նատ լաւ . . . երկու ոսկի կը բաւէ:

— Այո՛, կը բաւէ:

Արքիսողոմ աղան երկու ոսկի տուաւ պատ-
կերհանին որ դուռը բանալն և աներեսութա-
նալն մէկ ըրաւ:

մէմ ուսի ողմանալուր այս պատ

▶

Կան մարդեր ոլ ցցունել կուզեն ինչ որ
չունին. կան ալ որ ցցունել չեն ուզեր ինչ որ
ունին. կան նաև որ ցցունել կուզեն ինչ որ
ունին: Արքողոմ աղան վերջիններէն էր, կը
փափաքէր որ բոլոր աշխարհ իմանալ աղա-
րակներ ունենալը և իւր փափաքն իրացնելու
համար ստակ ալ չէր ինսպիր: Այսպէս, երբ
ըսին իրեն թէ մեծ մարդերն իրենց պատկեր-
ներն ունին՝ հաւանեցաւ որ ինք ալ իրենն
ունենալ. բայց կասկածելով թէ խաբված ըլ-
լալ և պարապ տեղը ստակէ ելլայ՝ Դերենիկին
մեկնելէն անմիջապէս ետքը հարցուց Մանուկ
աղալին.

— Եթէ պատկերս քաշել չտամ զիս մար-
դու աեղ չե՞ն դներ:

— Քաւ լիցի, բայց քանի որ ձեր աստի-
ճանի մարդերը իրենց պատկերները հանել
տուած են, ձեզի ալ կը վայլէ որ անոնց պէս
ընէք: Երբ մէկն ձեր պատկերն ունենալ փա-



փաքի և դուք պատասխանեք թէ պատկեր
քաշել տուած չեմ
— Ի՞նչ կըլլալ:
— Բան մը չըլլար . . . բայց . . .
— Բայց ի՞նչ . . . աղարակներս կառնեն
ձեռքէս . . .

— Ամենեին:

— Ոչխարներս, կովերս կը յափշտակէն:
— Բնաւ . . . բայց . . . խաւարեալ մար-
դու տեղ կը դնեն ձեզի, չեն ըներ այն պա-
տիւն գոր կուտան մեծ մարդերու:
— Հասկցալ. ի՞նչպէս հանել տալու եմ
ուրեմն պատկերս որ տարակուս չմնայ թէ
պղտիկ մարդ չեմ, վասն զի ըսիք թէ պղտիկ-
ներն ալ իրենց պատկերներն հանեն:
— Ձեր պղտիկ մարդ չըլլալը հասկցնելու
համար մեծ պատկեր հանելու էք, թիկնաժո-
ռի մը վրայ նստած:
— Նոր հագուստներս հագնելու եմ, այս-
պէս չէ:

— Ալո՞:

— Ժամացուցս ալ կախելու եմ հարկաւ:
— Տարակուս չկայ:
— Սանկ ծխափող քաշելով և երկու մարդ
ալ դէմս բարեւ բռնելով և մէկն ալ ետեէս
ձիս բռնելով:

— Ալո՞ այս:

— Դեռ ուրիշ ի՞նչ պէտք էս փառաւոր
երևնալու համար:
— Ալոչափ բաւական է:
— Կուզէի որ սպասաւորներէս երկուքն
ալ չախելով դիմացէս վռնտէի և անոնք ալ
գլուխնին ծռած գուրս ելնէին. վերջապէս սանկ
բաներ չը կրնար ըլլալ . . . կամ թէ մէկը
ծեծէի . . . օրինակի համար, մեր աղարակնե-
րուն վերակացուին երեսն ի վեր պօռալի . . .
«մարդ, քեզի քանի անգամներ հրամալեցի որ
մշակներու հետ քաղցրութեամբ վարվիս, կո-
վերուս հետ սիրով երթաս, վար ու ցանը ժա-
մանակին ընես, քանի որ ասոնք չըրիր, ես ալ
քեզի կը վռնտեմ»: Վերակացուն ալ թաշկի-
նակովն աչերը սրբելով ոտքերուս իյնալ, աղա-
չէ և պաղատի ըսելով «զաւակներուս սիրոյն
համար ներէ յանցանացս, ալոչափ տարիներէ
հետէ ձեր հացը կուտեմ, գուք իմ բարերարս
էք, ես զձեզ գրկերուս մէջ ալնչափ գրկած
ու պտտցուցած եմ երբ դեռ պղտիկ էիք . . .
«վերջապէս սըւոր նման» բաներ չենք կրնար
դնել պատկերին մէջ:

— Ատոնց վրայ վաղը կը խորհինք, մենք
հիմա սկսինք մեր երէկուան պատմութեան որ
կիսատ մնաց: Մելքոն աղան զիս տեսնե-

լուն պէս . . . : Հայութիւն
 զում — Կամ թէ սանկ կռնակի վրայ պառկիմ
 և սպասաւորներս ալ բան թալօնս քա-
 շեն . . . : Տափառաց խաչով
 Ձիս տեսնելուն պէս մօտեցաւ ինձի
 եւ . . . : Այսուհետեւ սկսանիք խոյնուց յա-
 րման — Ն արկի լէլով աւելի փառաւոր ըլլ-
 լար . . . : Խոյնուց յանդեռ ուղարկուած
 Մօտեցաւ ինձի և ձեռքերս բոնելով
 ըսաւ . . . թէ ալոր չաշխատինք՝ մեր չուզած
 մարդերը թաղական պիտի ընտրին:
 — Սանկ տասը կանգուն երկայնութեամբ
 մար բուճ մը . . . : Այսուհետեւ այսուհետեւ
 Սնոնք վաղուան գործ են, Աբխոզոն
 աղա, թող տուէք որ սա պատմութիւնս
 լմնցնեմ: Մելքոն աղան թևէս բոնելուն պէս
 քաշեց զիս ազգալին ընթերցատունն ուր երի-
 տասարդներ նստած թուզթէ կը խաղալին:
 — Ես ալ կըսեմ որ մար բուճը եթէ
 կարճ ըլլայ՝ աւելի աղուոր կերեալ պատկերին
 մէջ:

Կեանքիս մէջ հարիւր անգամէն աւելի
 հանդիպած եմ այս տեսարանին, ուր երկու
 դերասաններ խօսքն իրարու բերնէն խափշա-
 կելով՝ իւրաքանչիւրը կը փափաքի առաջ իւր
 խօսքը մտիկ ընել տալ: Այն, հարիւր անգամ

ներկայ գտնըլված եմ, երկու անգամ ընկերու-
 թիւններու մէջ և իննըսունը ուժը անգամ
 Ազգալին երեսփոխանական ժողովոյ մէջ: Հա-
 րիւր մէկերորդ անգամն էր այս, և սատանան
 կը գրդէր զիս ըսելու ալս երկուքէն մէկուն
 «ժող տուր դիմացինիդ լմնցնել իւր խօսքն և
 վերջը խօսէ»: Բայց որովհետեւ ուրիշ անգամ-
 ներ այսպէս խօսած ըլլալուս համար մէկուն
 կամ մէկալին սիրտը կոտրած եմ, որոշեցի չէ-
 զոքութիւն պահել, թող տալ իրենց փոխաս-
 ցութիւն ընել և սկսամել տեսնելու համար
 թէ ինչպէս պիտի վերջանալ ալս տեսարանն
 որ Ազգալին երեսփոխանական ժողովոյ մէջ
 գրեթէ միշտ կոփւով կը վախճանի:

— Իրաւունք ունիք, պատասխանեց Մա-
 նուկ աղան, կարճ մար բուճը շատ աղէկ
 կերեալ պատկերին մէջ, բայց և այնպէս մա-
 քուր և շիտակ ըլլալու է թաղական ընտրը-
 վող մարդ մը:

— Դուք աղէկը կը ճանչնաք:

— Իմ ճանչնակ մինակ օգուտ ըներ,
 քուեարկութեամբ կընալիի:

— Քուէարկութեամբ:

— Այս, ըստ Սահմանադրութեան քուէ-
 արկութիւնը կընտրէ:

— Ի՞նչ կըսէք, թաղեցին քուէ պիտի

տալ հիմա աղէկ մ ա լ բ ու ճ մ ը լ ը ն տ ր ե լ ու
համար: Թ ա ղ ա կ ա ն ի վ ր ա լ է մ ե ր խ օ ս ք ը : Ա ղ ա ն ի մ ը :
Թ ա ղ ա կ ա ն ն ո ւ ս կ ի ց հ ա ն ե ց ի ր . մ ա ր ը ո ւ ճ ի վ ր ա լ է մ ե ր խ օ ս ք ը : Մ ա ր ը ո ւ ճ ի վ ր ա լ է մ ե ր խ օ ս ք ը :
Մ ի բ բ ա ր կ ա ն ա ք , Ա բ ի ս ո ղ ո մ ա ղ ա , ա լ ն ր պ է ս ը լ լ ա լ :
Ի ն չ ո ւ բ ա ր կ ա ն ա մ պ ի տ ի : . . վ ա ղ ը ե ր թ ա ն ք հ ա տ մ ը ա ռ ն ե ն ք :
Կ ա ռ ն ե ն ք : Ա լ ս պ ա հ ո ւ ն ս ե ն ե ա կ ի ն դ ո ւ ո ւ ր բ ա ց վ ե ց ա ւ :
և կ ն կ ա ն մ ը գ լ ո ւ խ ե ր ե ց ա ւ :
Ա լ ս կ ի ն ը Շ ո ւ շ ա ն կ ը կ ո չ վ է ր և ի ւ ր ա ր -
հ ե ս տ ն ա լ ս ի լ ո ւ մ ի ջ ն ո ր դ ո ւ թ ի ւ ն է ր . ա լ ր ե ր ո ւ ն
կ ի ն կ ը գ տ ն է ր , կ ի ն ե ր ո ւ ն ա լ ը կ ը մ ա տ ա կ ա -
ր ա ր է ր և զ ա ն ո ն ք ի ր ա ր ո ւ հ ե տ ա մ ո ւ ս ն ա յ ն ե -
լ ո վ ի ւ ր ա շ խ ա տ ո ւ թ ե ա ն վ ա ր ձ ք ը կ ը ն դ ո ւ ն է ր :
Ե ր բ ե մ ն ա լ ա լ ր ը կ ի ն է ն կ ը զ ա տ է ր և դ ա ր ձ ե ա լ
ի ւ ր ա շ խ ա տ ո ւ թ ե ա ն փ ո խ ա ր է ն ը կ ա ռ ն է ր : Տ ա -
ր ի ք ն ե թ է ի ր ե ն հ ա ր ց ն ե ս , ե ր ե ս ո ւ ն ը վ ե ց է ,
ի ս կ ե թ է հ ա ր ց ն ե ս ի ն ձ ի , ո ր մ ի շ տ ս ո վ ո ր ո ւ -
թ ի ւ ն ո ւ ն ի մ կ ն կ ա ն մ ը խ ո ս տ ո վ ա ն ա ծ տ ա ր ի -
ք ի ն վ ր ա լ տ ա ս ն ա ւ ե լ , ք ա ռ ա ս ո ւ ն ը վ ե ց է : Ծ ա ղ կ ի հ ի ւ ա ն դ ո ւ թ ի ւ ն ը ի ւ ր ն շ ա ն ն ե ր ը
ձ գ ա ծ է ա ն ո ր ե ր ե ս ը : Ա լ և ե ր կ ա ր դ է մ ք մ ը մ ը
ո ր ո ւ ն կ է ս ը կ ը կ ա զ մ է ր ծ ն ո տ ը , և ո ր ո ւ ն մ է ջ

տ ե զ ը ե ր կ ն ց ա ծ է ր ք ի թ մ ը ո ր բ ա ր ձ ր և ճ ո խ
յ ա ն գ մ ո ւ ն է ր , կ ը կ ր է ր ի ւ ր վ ր ա լ ե ր կ ո ւ փ ո ք -
ր ի կ և ս ւ ա չ ե ր ո ր ա մ ե ն վ ա լ ր կ ե ն ի ն չ ո ր ս կ ո ղ -
մ ը կ ը պ տ ը տ է ի ն : Հ ա ղ ի ւ ե ր կ ո ւ մ ա տ լ ա յ ն ո ւ -
թ ե ա մ բ ճ ա կ ա տ մ ո ւ ն է ր . ը ն ք ո ւ ի ն ե ր ը հ ի ւ ա ն -
գ ո ւ թ ե ն է թ ա փ ա ծ է ի ն :

Տ ի կ ի ն Շ ո ւ շ ա ն գ լ ո ւ խ ը դ ո ւ ն է ն ս ն ե ր ս խ օ -
թ ե լ է ն ե տ ք ը դ ո ւ ո ւ ր բ ա ց ա ւ և ս ն ե ր ս մ տ ա ւ
ը ս ե լ ո վ :

— Ե թ է գ ա ղ տ ն ի խ օ ս ք մ ը ո ւ ն ի ք գ ո ւ ր ս
ե լ ն ե մ :

— Ո չ , պ ա տ ա ս խ ա ն ե ց Մ ա ն ո ւ կ ա ղ ա ն ,
թ ա ղ ա կ ա ն ի վ ր ա լ է ր ի ս ո ս է ի ն ք :
Գ ե տ ն ի ն տ ա կ ը ա ն ց ն ի ա լ ն թ ա ղ ա կ ա -
ն ի խ ն դ ի ն , ը ս ա ւ Տ ի կ ի ն Շ ո ւ շ ա ն , և ծ ա ն -
ը ո ւ թ ե ա մ բ գ լ ո ւ խ ն Ա բ ի ս ո ղ ո մ ա ղ ա լ ի ն ծ ո ւ ե լ ո վ
գ ն ա ց բ ա զ մ ո ց ի մ ը վ ր ա լ ն ս տ ե լ ո ւ :

— Բ ա ր ի ե կ ա ք , Տ ի կ ի ն , ը ս ա ւ Մ ա ն ո ւ կ
ա ղ ա ն .

— Բ ա ր ի տ ե ս ա ն ք : Գ ո ւ ք ա լ բ ա ր ի է ք
ե կ ե ր Ա բ ի ս ո ղ ո մ ա ղ ա , ք ա ղ ա ք ն ի ս ի ն չ ա լ է ս գ տ ա ք
ն ա լ ի ն ք , հ ա ւ ն ե ց ա ք :

— Հ ա ւ ն ե ց ա լ , շ ա տ ա ղ է կ է :

— Ա լ ս կ ո ղ մ ե ր ը ի ն չ գ ո ր ծ ո ւ ն ի ք , հ ա ր -
ց ո ւ ց Մ ա ն ո ւ կ ա ղ ա , դ ա ր ձ ե ա լ ն շ ա ն ս ո ւ ք մ ը
կ ա լ , ի ն չ կ ա լ :

— Հրամմեր էք, սա գիմացի տունը եկալ՝
և անդամ մ'ալ ձեզի հանդիպմ ըսի: Սա Ան-
թառամին աղջիկը գիմացինիդ տղուն կուզեմ
շինել. գործն ալ լմնցածի պէս էր, բայց տի-
կին Մարթան իւր աղջիկը տալ ուզելուն հա-
մար Անթառամին աղջկանը վրայօք խել մը
խօսքեր ըսած էր մանչուն, ան ալ քիչ մը պա-
զած է: Այսօր եկալ որ զինքը տեսնեմ և հա-
մոզեմ բայց դուրս ելած ըլլալուն՝ վաղը պի-
տի գամ:

— Աղջիկ մ'ալ մեր Աբիսողոմ աղալին
չդըտնաս:

Աբիսողոմ աղան ժապեցաւ: Տիւմարին
— Տիկինն արդէն իմացուց ինձի վարը
թէ Աբիսողոմ աղան կարգված չէ և ես ալ
շիտակը անոր համար վեր ելալ, պատասխա-
նեց Տիկին Շուշանը ճերմակ թաշկինակովն
քիթը սրբելով:

— Անանկ միտք մը ունիմ, ըսաւ Աբի-
սողոմ աղան տեղէն ելնելով և սիկար մը
հրամցնելով տիկին Շուշանին:

— Եթէ անանկ միտք մը ունիք՝ քեզի
ալ կըրնանք ձեր ուզածին պէս աղջիկ մը
գտնել. քսան տարիէ ի վեր այս գործին մէջն
եմ, ամենքն կը ճանչնամ: Հրամանքնիդ ինչպէս
աղջիկ կուզէք, անդամ մը ան հասկնալու եմ ես:

Մանուկ աղան տեսնելով որ Աբիսողոմ
աղան տիկին Շուշանի հետ խօսքի բանուե-
ցաւ, գուրս եւաւ ուրիշ անդամի պահելով թա-
ղականի պատմութիւնն զոր չէր կրցած աւար-
տել:

— Աղուոր աղջիկ մը կուզեմ, պատաս-
խանեց Աբիսողոմ աղան խնդալով:

— Գիտեմ որ աղուոր աղջիկ կուզես. ու-
զած աղջիկդ հարստատ ըլլալու է:

— Այս:

— Պարկեշտ:

— Հարկաւ:

— Տասնըլեց տասնեռութ տարեկան:

— Ճիշտ:

— Գաշնակ զարնել գիտնալ:

— Գիտնալու է:

— Աղէկ պարէ:

— Հրամմեր էք:

— Շատ լաւ, ասանկ աղջիկ մը կալ ձեռ-
քիս տակը, բայց այս տեսակ աղջիկները գործ
չեն տեսներ տունը. առտուընէ մինչեւ իրի-
կուն ծունկի վրայ կը դնեն և կերգեն,
կը պարեն և կամ բոլոր օր կը պարտին. հի-
մակուընէ ըսեմ վերջէն ինձի պատճառ
չը-
բունես. աղէկներն ալ կան բայց գտնելը շատ
գժուար է: Քու ըսած աղջիկներուդ մէջ անանկ-

ներ ալ կան որ իրենց ուզած մէկը կը սիրեն
և շատ անգամ անոր հետ գեղ մը կը փախ-
չին և քուն ալ կսպասես որ կինդ դայ:
— Խնչ կըսէք: Եթէ այնպէս է չեմ ու-
զեր:

— Բայց կան ալ որ վրադ կը խենդենան:

— Եթէ ալսպէս է՝ կուզեմ:

— Բայց կան ալ որ ամիս մը իրենց սի-
րածին հետ կապրին և քուանունդ բնաւ չեն
տար:

— Եթէ ալսպէս է՝ չեմ ուզեր:

— Բայց կան ալ որ վալրկեան մը քովէդ
չեն բաժնվիր:

— Եթէ ալսպէս է՝ կուզեմ:

— Ասոնք ըսելուս համար ինձի բան մի
ըսեր. վասն զի կան անանկներ ալ որ թող
կուտան իրենց կինը ուրիշի մը հետ սիրահա-
րութիւն ընել և աղջկան հօրմէն քիչ մը
դրամ առնելով աչք դոցել:

— Իրաւ կըսէք, անանկ էրիկ մարդ կը
գըտընվի՞ աշխարհիս վրայ:

— Մազէս շատ:

— Եւ այն տեսակ էրիկ մարդերու և կի-
ներու երեսը ով կընաի:

— Ամեն մարդ կինը կարդարացնեն ըսե-
լով թէ՝ սատանակ խարված է, էրիկն ալ կը

սրբացնեն ըսելով թէ՝ խեղճը չգիտեր իւր
կնոջ բռնած ընթացքը:
— Է, հիմայ կը ճամթիմ . . . չեմ ուզեր
չեմ ուզեր, թող մնալ, իմ քաղաքս կը կարգ-
վիմ:

— Բայց և այնպէս անանկներ ալ կան որ
քեզի համար իրենց հոգին անգամ կուտան:

— Անանկ մէկն եթէ գտնեմ կը կարգ-
վիմ:

— Ես ալ անանկ մէկը պիտի գտնեմ քե-
զի իմ հարցաւնելս սա է որ ձեր ինչ տեսակ
աղջիկ ուզելը հասկնամ:

Ես ալ իրաւոնք կուտան տիկին Շուշա-
նին. վասն զի ամեն օր այնպիսի ամուսնու-
թիւններ կը տեսնենք որք մարդուս զարմանք
կուտան: Ատեն մը հետաքրքրութեան համար
կարգված մարդու մը սիրու կըկնատոմարը գրե-
ցի, և տարեգլխուն հաշուէկըշիուը հանելով
տեսալ որ ալդ մարդը սնանկացած էր բարուա-
կանութեան մէջ: Բարես կտրեցի իրմէ և սա-
կան մեծ զարմանքով տեսալ որ ալդ մարդը
մեծ պատիւ կը գանէ ընկերութիւններու մէջ
և իբրև բարուականի տէր անձ մը ամեն կող-
մէ լարգանք կընդունի: Հետաքրքրութիւնս
աւելցաւ, հաշուէկըշիուս նորէն աչքէ անցուցի
և դիտեցի որ կինն զոր ես ալդ մարդուն ըն-

կեր նշանակած էի Մալը հաշուոյն մէջ, որ տամա գլուխի կողմ անցած է էրկանը տետրակին մէջ։ Եթէ օր մը սիրոյ տոմարակալութիւն մը հրատարակեմ՝ մեծ յուզմունք սիրտի պատճառեմ հաշուագէտներու մէջ. վասն զի ես շատ էրիկ մարդիկ գիտեմ որոնք կինն իրենց սիրոյ հաշուոյն մէջ ընդհանուր ծանրի կողմ կանցունեն. շատերը կար ասսիքի հաշուոյն տակ կը գրեն. ոմանք ընդհանուր ապրանքի կարգը կանցունեն. ոմանք վճարելի թուղթ ուղերձու և ոմանք ընդհանուն ելի թուղթ երու հաշուոյն մէջ կը նշանակեն։ Խիստ քիչ են այն նախանձելի ամուսնութիւններն որոնց մէջ կինը էրկանը ընկեր կարձանագրի սիրոյ տետրակին մէջ։

— Կարդիլը շատ անուշ բան է, յարեց սիրոյ միջնորդն, քեզի յարմար աղջիկ մը գտար, ամեն օր արքալութեան մէջ ես . . . :

— Ես ալ ասոր համար է որ կարգվիլ կուղեմ։

— Կինդ բնաւորութեանդ չլարմարեցաւ, ամեն օր գժոխքի մէջ ես, կրակներու մէջ կերիս։

— Ես ալ ասոր համար է որ կարգվելու կը փախնամ։

— Նալեցէք, ձեզի բան մը ըսեմ աղա,

Հրամանքնիդ հարկաւ մեծ տեղէ մը աղջիկ կուղէք առնել, վասն զի դուք ալ մեծ մարդ մէք։

— Այն, այն, մեծ տեղէ կուղեմ։

— Ես ալ քեզի մեծ տեղէ մը աղջիկ կը գտնեմ, բայց հրամանքնիդ ֆրանսերէն գիտէք։

— Մեծ տեղէ աղջիկ առնելու համար անպատճառ ֆրանսերէն գիտնալու է։

— Այն, վասն զի մեծ տեղի աղջիկներն ֆրանսերէն կը խօսին, և երբ կին մը իւր էրկանը չգիտցած լեզով ուրիշ մը հետ կը խօսի տակէն նախանձ կենէ։

— Ես ալ կը սորվիմ ֆրանսերէն։

— Բայց ի ասկից երջանկութիւնը շատ քիչ կը գտնվի այն ամուսնութեան մէջ ուր կնիկն էրիկէն աւելի բան գիտէ։

— Այնպէս է, ես ալ այն կարծիքէն եմ։

— Հրամանքնիդ ևրոպական եղանակներէն բան մը կը հասկնաք։

— Ամենակին բան մը չեմ հասկնար եմանաւանդ թէ կը ձանձրանամ։

— Խնչ պիտի ընես ուրեմն եթէ կինդ ժամերով դաշնակի առջևն անցնի և այդ նուագարանի վրայ երոպական խաղեր զարնէ։

— Թո՛ղ չեմ տար, ես ձանձրովի կիմանամ։

Սն հաճուք կզգալ: ինչ բիշօնական
կին մը ինչ իրաւունք ունի իւրեղո
կանը գլուխ ցաւցունելու:

— Երիկ մը ինչ իրաւունք ունի իւրեղոնն
զուարձութենէ զրկելու:

— Եթէ գործը մինչեւ աս տեղուանքը
պիտի գալ, չեմ կարգվիր:

— Զկարգվիլ ըըլլար, միայն թէ պիտի
ստիսվիս կնկանդ ճաշակին լարմարելու համար,
դաշնակ սորվիլ:

— Ես կընամ սովորիլ:

— Ինչու չէ, մանաւանդ թէ աւելի գիւ-
րին է քեզի դաշնակ զարնել սորվիլ քան թէ
կնկանդ դաշնակ զարնելը մոռնալը:

— Եթէ ալսպէս է՝ ատոր ալ ճամբան
գտանք ըսել է:

— Ասոնք ըսելուս պատճառն ան է որ
ես հոգիս սեցունել չեմ ուզեր, ամեն բան
առաջուց կըսեմ որ վերջէն ինձի պատճառ
չըունեն: Իմ ձեռքիս տակ ամէն դասէ աղջիկ
կալ. բարձր դասէն, միջին դասէն և ստորին
դասէն. այս երեք դասէն ալ ծախու ապրանք
ունիմ, հրամանքնիդ ձեր քսակին հետ խորհր-
դակցեցէք և ինձի ըսէք սա դասէն կուզեմ:
Յալտնի է որ բարձր դասը շատ սուղ է, մի-
ջինն նուազ սուղ և ստորինն աժան:

— Ես շատ աժան չեմ ուզեր:—
այս ու Նատլաւ, աղջիկը ճերմակ գոյն ու-
նենալ թէ քիչ մը լուսիս:
Ճերմակ կուզեմ:

— Աչքերը սեւ թէ կապուտ:

— Եկու տես որ սեն ալ կը սիրեմ կա-
պուտն ալ . . . :

— Կամ մին պիտի ըլլալ կամ միւսը.
վասն զի չկընար ըլլալ անանկ աղջիկ մը որուն
մէկ աչքը կապուտ ըլլալ և միւսը սեւ:

— Կապուտ ըլլալ թող:

— Նատ լաւ: Հասակն և մազերը . . . :

— Երկար, երկար:

— Մէջքը . . . :

— Մէջքը բարակ ըլլալ, բայց տկար չեմ
սիրեր կուզեմ որ քալած ժամանակը միսերը
շարժին:

— Կը համկնամ, այսչափը հերեք է. ճիշդ
ուզածիդ պէս աղջիկ մը կալ որ շատ ալ պար-
կեշտ է և իրեն էրկանը համար հոգի տալ կե-
րեալ:

— Ես ալ անանկ մէկը կուզեմ:

— Թերեւս վաղը քու անունդ իրեն ըսե-
լուս պէս վրադ ոէր կապէ: Պատկերդ տուր որ
իրեն անգամ մը ցցունեմ:

— Պատկերս վաղը հանել պիտի տամ:

— Վաղը . . . վաղը հանել տալու որ ըլ-
լաք ութը օրէն կառնէք և ութ օր սպա-
սենք:

— Ինչու սպասենք, վաղը կերթանք, մեծ
տեղէն է աղջիկը:

— Այս:

— Հայրը հարուստ է:

— Շատ հարուստ է, բայց հարստու-
թիւնը չը ցցուներ:

— Շատ խանութներ ունի:

— Քսանի չափ:

— Տուն:

— Քառասունի մօտ:

— Շատ աղէկ, վաղը չէ միւս օր կեր-
թանք ալդ աղջիկը տեսնելու:

— Գիխուս վրայ. ցերէկին կուգամ և մէկ
տեղ կերթանք: Մնաք բարով, Աբիսողոմ աղա,
սիրտգ հանդիսա բոնէ, ես քեզ չեմ խարեր,
ուրիշներու կրակէ շապիկ հագցնողներէն չեմ:
Կեցիք բարով. վաղը չէ միւս օր:

Տիկին Շուշանը կը մեկնի:

— Այս զանգն ամիս ամենամասն զի զցիքու յանձն
ծառ պարագաներ պահանջութիւն է ու ազգական
նույն պահանջութիւն է անցան առաջանա-
կան Սանուկ աղան որ վարի սենեակն էր և

խահվէ կը խմէր, Տիկին Շուշանին վար իջ-
նալն տեսնելուն պէս խահվէի գաւաթն թո-

զուց և Աբիսողոմ աղային քովը գնաց:

— Այսպէս, ըստ, Մելքոն աղան թեէս
քաշեց և մէկտեղ ընթերցատունը մտանք: Այդ

ընթերցատունը ժամանակաւ գինետուն էր:
Աստուած ողորմի հոգուն, կոմիկ աղան կը

բռնէր, աղէկ մարդ մէր. հիւանդութիւն մը
եկաւ վրան, շատ բժիշկներ նայեցան, ճար
մը չկրցին գտնել և խեղճը մեռաւ . . . :

— Մանուկ աղային կինը՝ լրագիր մը ի
ձեռին ներս մտաւ և լրագիրը Աբիսողոմ աղա-
յին տալով.

— Մեծապատիւ էֆէնտին լատկապիւ բա-
րեւ ըրած է ձեզի, ըստ և դուրս ելաւ:

Աբիսողոմ աղա աճապարանօք բացաւ լը-
րագիրն և կարդաց.

Վանէն հետեւեալը կը գրեն մեղ: Այս
չէ, վարինը կարդանք, ըստ և կարդաց: Մեր

բարեկամներէն մին Մուշէն հետեւեալը լրկած
է մեղ ի հրատարակութիւն: Աս ալ չէ, միւ-
սը նալինք. Քուրի է տ' օրի անի մէջ հե-

տեեալ տողերը կը տեսնըվին, միւս երեսը անցնինք: Թա և մ զի թղթակիցը հետեւեալը հեռագրած է լիշեալ լրագրին: Ասոնց մէջ իմ անունն չկալ . . . սա կտորը նալինք . . . Մալրաքաղաքիս աղնուական դասուն անդամ մ'ալ աւելյաւ այս օրերս: Երեւելի վաճառական եւ բաղում ագարակներու տէր, ազգասէր, լեզուագէտ, ազնուասիրտ և վեհանձն Արիսողոմ էֆէնտի որ մեր ազգայնոց ծանօթէ, երէկ Տրապիզոնի շոգենաւով մայրաքաղաքս եկաւ և ուղղակի Բերա ելաւ Ծաղկի փողոց թիւ 2 տունը: Արիսողոմ էֆէնտի պէս մէկու մը մայրաքաղաքս զալն անշուշտ մեծ ուրախութիւն պիտի պատճառէ մեր բարեմիտ ազգայնոց: Արիսողոմ աղան Մելքոն աղալին դառնալով տես, ըստ, ինչ դրած է ինձի համար և բարձր ձախով անդամ մ'ալ կարդաց:

— Մեծապատիւ էֆէնտին բարւ կընէ եղեր, ըստ Տիկինը նորէն ներս մտնելով, բաժանորդագին պիտի տաք եղեր:

— Հիմա, ըստ Արիսողոմ աղան և տուաւ բաժանորդագինն տիկնոջ որ վազելով վարիչաւ:

— Սա մարդը գէշ չը գրեր կոր հէ, հարցուց Արիսողոմ աղան;

— Այս, գէշ չըգրեր:

Պատուական լրագիր մ'է: Աւելի պատուականը կրնալ ըլլալ:

Տիկինը գրաւելանալով Արիսողոմ աղային նամակ մըներախոշորած բարձրագրանձնեց ըսելով:

Մեծապատիւ էֆէնտին մասնաւորապէս կը բարեէ զձեզ:

Արիսողոմ աղան նամակը բացաւ և հետեւեալը կարդաց:

Մեծապատիւ էֆէնտի

Զեր Մեծապատուութեան մայրաքաղաքս գալն իմանալով փութացի ձեր գալուստը շնորհաւորելով լրագրես տասն օրինակ զրկել: Քաջալոյս եմ որ պիտի հաճիք ձեր բաժանորդութեամբը քաջալերել լրագիրս, որով պիտի խրախուսէք զիս որ խմբագրական տաժանելի ասպարէզին մէջ ազգին ծառայութիւններ ընելու կոչուած եմ:

Մնամ լանգանօք

Խմբագիր — Տնօրէն

ԼՐԱԳՐՈՅՑ

(ԱՐԵՎԵՆԻ ԱՆԴԻ)

Տասը հատն ինչ ընեմ . . . :

Կշտանալով կը կարդանք . . . :

Տիկինը նորէն ներկայացաւ և ծրարով մը

նամակ մ'ալ տուաւ Աբիսողոմ աղալին որ բա-
նալով սկսաւ կարդալ:

Մեծապատիւ էֆէնտիւ:

Զեր հանրածանօթ պագասիրութիւնը քա-
ջալերութիւն տուաւ ինձ լրագրէս տասնըհինգ
օրինակ զրկել ձեզ: Քաղցը է ինձ լուսալ որ
պիտի բարեհաճիք զանոնք ընդունիլ և պաշ-
տպան կանգնիլ լրագրութեան որ մեր մէջ
ընթերցասիրութեան չը տարածուելուն պատ-
ճառաւը դժբաղդաբար գէշ վիճակի մը մէջ
կը գտնիի:

Մնամք յարգանօք
Խմբագիր—Տնօրէն
..... ԼՐԱԳՈՒՅ
(առաջարկութեան)

Աբիսողոմ աղան նամակը ծալելու վրայ
էր տիկինը ներս մտաւ:

— Մեծապատիւ էֆէնտին սիրոյ բարե-
ներ կընէ եղեր ձեզի, ըստ և նամակով մը
գիրքեր ներկայացուց Աբիսողոմ աղալին որ նա-
մակը բացաւ և սկսաւ կարդալ.

Մեծապատիւ էֆէնտիւ:

Իմ մտքիս ծնունդն եղող քերթուածները
Հրատարակած ըլլալով՝ արժան դատեցի անոն-
ցմէ քառասուն օրինակ ձեզ զլվել: Կը լուսամ
որ շնորհ կընէք զանոնք ընդունելու և կեր-

պով մը քաջալերութիւն տալու ինձ որպէս
զի միւս քերթուածներս ալ քիչ օրէն հրա-
տարակութեան տամ:

Խնդրելով որ ընդունիք իմ խորին մեծա-
րանաց հաւաստիքը, մնամ ձերդ մեծապա-
տութեան խոնարհ ծառալ
(առաջարկութեան)

Աբիսողոմ աղան նամակը գոցեց և քովը
դրաւ:

Տիկինը դարձեալ ներս մտաւ:

— Մեծապատիւ էֆէնտին բարեւ ըրած
է դարձեալ, հարցուց Աբիսողոմ աղան:
— Ո՛չ, բեռնակիրներէն մէկը եկած է և
կըրողչէքը կուզէ:

Աբիսողոմ աղան քսան դահեկրոն հանեց
տուաւ:

Տիկինը դուրս ելաւ, գուռը գոցեց:
— Ընթերցատան մէկ անկիւնը քանի մը
հոգի նստած ընտրելի թաղականներու ցու-
ցակը կը պատրաստէին, ըստ Մանուկ աղա-
իւր պատմութեանը թելն ձեռք առնելով:
Անոնք մեր կողմէն չէին և կաշխատէին որ
իրենց ուզած կաշառակեր մարդերը թաղական
ընտրեն:

— Տղուն մէկը եկաւ սա գիրքերը ձգեց
գնաց, ըստ տիկինը նորէն մտնելով, Մեծա-

պլտափւ էֆէնտին շատ բարեկ կընէ սեղեր և
այսօր կամ վաղը սլիտի գալ եղեր զձեղ տես-
նելու:

— Տիկինը դրքերը սեղանի մը վրայ դրաւ:
— Ի՞նչ ընեմ ալսափ գիրքերը, դրա-
վաճառ պիտի ըլլամ ես: Զեմ ուզեր, ալ աս-
կից վերջը թէ բերող ըլլալ՝ մի ընդունիր,
Արիսողոմ աղան հոս չէ ըսէ և ճանրէ:

— Ատ ալ ըլլար, դուն խմբագիրները
չես ճանչնար, անոնց մէջ կը գտնուին ալն-
պիսիներ որ երկ իմանան թէ իրենց ընկեր-
ներէն մէկուն լրագիրն առած ես և իրենցը
չես առեր՝ վրադ կը յարձակին ու չլսված խօս-
քեր կընեն:

— Եթէ ալնպէս կէ ընդունէ որչափ լրա-
գիր որ բերեն. ի՞նչ ընենք, բռնվեցանք ան-
դամ մը. եթէ գիրք բերեն մի ընդունիր:

Տիկինը գլուխը ծռելով դուրս ելաւ:

— Թէպէտ և ալդ մարդիկն իրենց ուզած-
ները թաղական ընտրելու կաշխատէին, բայց
իրենց մէջ ալ անմիաբանութիւն կար. ակնա-
վաճառն իւր առաջին յաճախորդը կուզէր թա-
ղական ընտրել հացագործն կուզէր թաղա-
կան ընտրել այն մարդն որուն տունը օրը
տասը հաց կուտար. դերձակն թաղական տես-
նել կը փափաքէր այն երիտասարդն որուն

վրայ շաբաթը երկու անգամ հագուստ կը ձեւէր
և կը կարէր. համետագործը քուէ տալ կաւզէր
այն հարուստին որուն մէկ երկու համետ կը
շինէր տարին. խմբագիրն իւր բոլոր բաժանոր-
դները թաղական խորհրդու մէջ տեսնել կու-
զէր. փաստաբանը իրեն շատ գատ յանձնողին
քուէ կուտար. բժիշկն իւր ամենէն ծանր հի-
ւանդին և գինեպանն ալ ամենէն շատ օղի
և գինի խմողին կուզէր յանձնել թաղին գոր-
ծերը: Ահա ալսպէս իրենց մէջ . . .

Մանուկ աղան գարձեալ չկրցաւ շարու-
նակել իւր պատմութիւնը, վասն զի ուրիշ
հիւր մը ներս մտնելով ընդհատեց անոր խօսքը:

Այս հիւրը մաքուը հագված երիտասարդ
մէր, իւր կլոր և ճերմակ դէմքը շրջանակված
էր գեղինով խառն սե մօրուքէ մը որ շատ
էր վայլեր: Պատկերներ կան որ առանց շրը-
ջանակի աւելի գեղեցիկ կերւան. թէպէտ և
ջանակի աւելի գեղեցիկ երևալու համար շրջանա-
կի կը կարօտին: — Եթէ ընութիւնը չարգիլեր
կիներու շրջանակի մէջ անցունել իրենց դէմ-
կին ալսպէս որչափ կիներ մօրուք պիտի ու-
քերն՝ այսօր որչափ կիներ մօրուք պիտի ու-
նենալին: — Այս երիտասարդը ներս մտնելուն
պէս հանեց իւր սե և երկար գլխարկն և բա-
րեկց սենեակին մէջ գանըող երկու բարե-
կամները:

Մանուկ աղան անմիջապէս դուրս ելաւ
բարկութեամբ՝ մռմռալով:

— Այս տարիքն եկած եմ և ասանկ բան
գլուխս եկած չեր. թող չեն տար որ երկու
խօսք ընեմ, հազիւթէ բերանս կը բանամ,
մէկը կուգայ, կոկոսի խօսիլ և իմ խօսքս բեր-
նիս մէջ կը մնայ:

— Արիսողոմ աղա հրամանքնիդ էք, հար-
ցուց հիւրն բազմոցի վրայ նստելէն ետքը:

— Այս, ես եմ:

— Նորհակալ եմ որ Արիսողոմ աղան
դուք էք. ձեր գալուստը լրագրի մէջ կարդա-
ցի և շատ ուրախացալ որ ազգերնուս մէջ ձե-
զի պէս ազնիւ սիրո կրող ազգասէրներ պա-
կաս չեն, վասն զի այն ազգն որ ազգասէր
չունի իւր մէջ՝ ազգ չէ:

— Այո:

— Փոխադարձաբար այն ազգասէրն ալ որ
ազգ չունի՝ ազգասէր չէ:

— Եիտակ է:

— Այս երկուքն իրարու հետ այնպիսի
սերտ կապակցութիւն մ'ունին որ իրարմէ բաժ-
նելուդ պէս՝ երկուքն ալ կը կորարվին:

— Այնպէս է:

— Ազգ մը որ իւր աշխատաւորները չքա-
ջալերեր, աւելցուց հիւրն միշտ ծանր և լըր-

ջագոյն եղանակաւ մը, ազգերու կարգ անց-
նելու բնաւ իրաւունք չունի:

— Շատ աղէկ կը խօսիք:

— Եւ երբ աշխատաւոր մը վարձքը ըլն-
դունիր իւր ազգէն՝ բնականաբար կը վհատի
և երբեմն կը խօրհի երթալ ինքզինք ծովը
նետել:

— Աս տղայութիւն է:

— Ներեցէք, Արիսողոմ աղա, եթէ մեր
այս առաջին տեսութեանը քիչ մը համարձակ
կը խօսիմ ձեզի հետ:

— Հոգ չէ:

— Ծառադ վեց տարի Եւրոպա մնացած
եմ և բժշկութիւն սորված եմ:

— Աղէկ արուեստ:

— Գիշերները քունս ծախելով կարդա-
ցած ու գրած եմ որպէս զի քաղաքս դառնամ
և ազգիս ծառայութիւն ընեմ:

— Մարդ ալ իւր ազգին ծառայութիւն
ընելու է:

— Երկու տարի է որ հոս կը գտնըվիմ և
մինչեւ այսօր հազիւ չորս հիւանդ նախած եմ.
Հասկցիր թէ ինչպէս կը քաջալերվին հոս
բժիշկները:

— Ցաւալի բան . . . այս տեղացիները հի-
ւանդ ըլլալու սովորութիւն չունին . . . :

— Ունին, բայց հոսէ հիւանդները ազգալին զգացում չունին, Հայաստանի վրայ գաղափար չունին:

— Ի՞նչ կըսէք:

— Այս, երբ հայ մը հիւանդ ըլլալ՝ օտար ազգե բժիշկ մը կը բերէ իւր տունը առանց գիտնալու թէ հայու ցաւն հայը կարողէ միայն բժշկել, առանց համոզվելու թէ օտարը չէ կարող հայու ցաւուն գարման ըլլալ: Այսօրուան օրս երկու հազարէն աւելի հայ բժշկշիշ կայ, ասոնց մէջէն հինգ վեց հատը, մանաւանդ երկու երեք հատը պատուական կեանք կանցունէ և անդին մնացածը ամեն օր բերանը բաց կսպասէ որ հիւանդ մը ներկայանայ իրեն և ստակ առնէ:

— Գէշ վիճակ:

— Ի՞նչ ընեն ազգալին բժիշկներն երբ ազգային հիւանդներն օտարներու կը գիմեն... ոհ, օտարասիրութիւն, օտարասիրութիւն, գոչեց բժիշկն աչերն երկինք վերցնելով, երբ պիտի երթաս մեր քովէն:

— Օտարասիրութիւնը աղէկ բան չէ:

— Մանաւանդ թէ բժիշկները քաջալերելու չափ հիւանդութիւն ալ չկայ մեր ազգին մէջ. և այն ազգին մէջ որ հիւանդութիւնը տարածված չէ՝ պարապ բան է երո-

պալի բժիշկներուն չափ ճարտար բժիշկներ յուսալ. ինչպէս նաև այն ազգն որու մէջ ընթերցասիրութիւնն տարածված չէ իրաւունք չունի տաղանդաւոր և Հանճարեղ Հեղինակներ ունենալու. տաղանդն և Հանճարն առանց քաջալերութեան կը մեռնին:

— Շատ իրաւունք ունիք:

— Զէք կարող երևակայիւ, Աբխազոմ աղա, թէ որչափ յուսահատած եմ. հազար անգամ զզչացած եմ, երկու հազար անգամ անէծք կարգացած եմ բժիշկ ըլլալու համար, ուր էր թէ բժիշկ ըլլալու տեղ հիւանդ ըլլալի և... մեռնէի. մեր ազգին մէջ հիւանդութիւնը բժշկութենէն աղէկ է, վասն զի տգիտութիւնն գիտութենէն աւելի կը քաջալերվի . . . թեթեռութիւնը ծանրութենէն աւելի յարգ կը գտնէ, մոլիներն առաքինիներէն աւելի պատիւ կը վալելէն. ճշմարիտ Աստուած, ուխտ ըլլած եմ որ եթէ օր մը երևելի ազգայիններէն հիւանդ մը նախիմ անոր անունը լրագիրներու մէջ բարձրացունեմ:

Այս խօսքին վրայ Աբխազոմ աղա արթնցաւ, ալսինքն վառասիրութիւնն արթնցաւ: Ի՞նչ անուշ բան է թերութիւններ հաւաքել միամիտ մարդերու վրայէն: Խորամանկներն երբեմն վարպետութեամբ ալնքան կը

կեղծեն իրենց թերութիւններն որ անոնց հա-
ւաքիչները կը շուարեցնեն. վասն զի անոնք
երբեմն միամիտ և երբեմն խորածանկը ձե-
ւանան, ժամ մը լուտգէտ, ո ժամ ամը գիտուն,
մերթ անաչառ, մերթայաշառու, մերթ կեղ-
ծաւոր, մերթ անկեղծ, և երբ ազգալին նշա-
նաւոր, հանճարեղ և հերանուշ Ծերենցը ասոն-
ցմէ միւնկարադրելով անընական անձ մը ներ-
կալացնէ՝ ամէն կողմէ կը բասրըվի թէ Ծե-
րենցն տակաւին Մանուկենց է անձեր ստեղ-
ծելու արհեստին մէջ, թէ մի և նոյն անձին
վրայ Արամն և Նեռն, աստանան և հրեշ-
տակն, Զոլին և Հոմերոսն, արականն և իգա-
